

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՆԿՈՐԴԿՆԱ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԴՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐԻՈՒԹԵՆԱԿԱՆ VIII  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԴԱՍԱ



ԱՐԴՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ VIII  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

~~66409~~  
A 1/8092



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԻ-Ի

1929 թ.

ՁԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊՈԼԻԴՐԱՅԻ ՏՊԱՐԱՆ

Գրառելության 2236 թ. Պատուի 4210  
Տվյալ 2000.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒ-  
ԹՑՈՒՆԸ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VIII ՀԱ-  
ՄԱԳՈՒՄԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ.

Պրոֆեսիոնալ Միությունների VIII համա-  
միութեական համագումարի վորոշումները  
ճիշտ հասկանալու համար հարկավոր ե պարզել  
այն ընդհանուր քաղաքական և տնտեսական կա-  
ցությունը, վոր ստեղծվել ե յերկրում համագու-  
մարի հրավիրման մոմենտին :

Յեթե պրոֆմիությունների VII համա-  
գումարը (1926 թվի դեկտեմբեր) հայլաքվեց այն-  
պիսի ժամանակ, յերբ դեռ չեր ավարտվել ժո-  
ղովրդական տնտեսության վերականգնման պրո-  
ցեսը և դեռ նոր-նոր եր ծրագրվում նրա վերակա-  
ռուցումը, ապա 1928 թվի դեկտեմբերին, յերբ  
սկսեց իր աշխատանքները պրոֆմիությունների  
VIII համագումարը, վոչ միայն հիմնակա-  
նում մենք արգեն հասել եյինք նախապատերազ-  
մյան մակարդակին, այլ բանվոր դասակարգը  
արդեն սկսել եր ժողովրդական տնտեսության  
վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով  
թե քաղաքում և թե՛ գյուղում :

Անցած յերկու տարվա ընթացքում տեղի յեր  
ունենում արդյունաշերության, տրանսպորտի և  
ամբողջ ժողովրդական տնտեսության չտնանված

բաւոն աճում : Արդյունաբերության հիմնական շինարարության մեջ (Ելեկտրոկայանների շինարարության հետ միասին) ներդրվել եր մոտ 2 միլյարդ 820 միլիոն ռուբլի : Պետական արդյունաբերության հիմնական կազմակերպ 1927-28 թ. ամելացել եր 1925-26 թվի հետ համեմատած 25 տոկ. : Պետական խոչը արդյունաբերության ընդհանուր արտադրանքը (ըստ գործարանային դնատության) կազմում եր 1925-26 թվին 4 միլիարդ 180,2 միլիոն ռուբլի : 1926-27 և 1927-28 թվի ընթացքում շահագործման մեջ և մտել ամելի քանի թվերը բավականաշափ լրիվ կերպով բնութագրում են այն լուրջ փոփոխությունները, վորոնք տեղի յն ունեցել մեր պետական արդյունաբերության մեջ : Յեթև յերկու տարի սրանից առաջ մենք մեր նվաճումները չափում ենինք նրանով, թե վորքան ենք մոռեցել նախադատերազմյան մակարդակին, առաջ հիմա արդյունաբերության ճյուղերի ճնշող մեծամասնության ընադադարում նախադատերազմյան ցուցանիշները արդեն դերադանցված են և հետ են թողնված :

Անցած յերկու տարվա ընթացքում կառուցված են և գործի յնողընթած մեծ թվով նոր ձեռնաբերկություններ, վորոնք սարքավորված են տեխնիկայի վերջին խոսքով : Ավարտված է վոլյովուստրոյը, սկսված են այնպիսի հսկայական կառուցվածքներ, ինչպիսին եւ Դնեպրոբարոյը,

Ավիրստրոյը, Վոլդո-Դոնյան ջրանցքը, Տուրեկեստան - Սիրիսի յերկաթուղին և այլն :

Այդ ժամանակամիջոցում արդյունաբերության մեջ մեծ աշխատանք է սկսված բացիռնայոցման ասպարիզում : Ակսված և նաև մեր արդյունաբերության տեխնիկական հիմքի վերակառուցումը : Այնպիսի ճյուղերում, ինչպիսին և նավթի արդյունաբերությունը, խկական տեխնիկական հեղտափոխություն և կատարված :

Այդ ժամանակնել և համադրումարը ՀԱՄԿԵ-ի հաջիառու զեկուցման առթիվ ընդունված բանաձևում .—«Համ . կոմ . կուսի (թ) և խորհրդային կառավարության նիշու բաղադրականության հետևողությունը ակարտված և ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանը և կառարկել և անցումը դեպի վերակառուցման շրջանը, դեպի նոր ֆարբիկների և գործարանների, ելեկտրոկայանների կառուցումը, հին ձեռնարկությունների վերասարքավորումը և արդյունաբերության սոցիալիստական բացիռնալիքացիան :

Բանվոր դասակարգը Համ . կոմ . կուսի (թ), խորհրդային իշխանության և պրոֆմիությունների զեկառարության տակ հաջողությամբ առաջ և շարժվել ԽՍՀՄ-ի խոկական սոցիալիստական վերաշնուրության ուղիով :

Բանվոր դասակարգը իր առաջինակացման ընթացքում դեպի ժողովրդական տնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքնե-

բավ, ձեռնամուխ և յեղել նաև գյուղատնտեսության վերափոխմանը նոր հիմունքներով, ակտիվ կերպով զուրս և յեկել այդ գյուղատնտեսությունը ավելի բարձր տեխնիկական աստիճանի բարձրացնելու, այդպիսին սոցիալիստական հիմունքներով վճռականապես վերափոխելու:

Տասնյակ միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների կոռուպկերացումն ու կոլլեկտիվացումը, հզոր խորհրդային գյուղատնտեսական ձեռնարկությունների զարգացումը պետք և մի կողմից ներդործն անհատական գյուղացիական տնտեսությունների ազգիկուլտուրական տեխնիկական մակարդակի բարձրացման վրա, իսկ մյուս կողմից ամրացնեն ինդուստրիացման հումքային բաղան և այդ հիման վրա տեխնիկակես ու կուլտուրապես հետամնաց գյուղը վերակառուցվում ու դառնում և կոլլեկտիվացը, սոցիալիստական գյուղ»:

Համագումարի բանաձեռում մատնանշված սոցիալիստական շինարարության հաջողությունները հսկայական են: Համագումարում կատարված մի շարք զեկուցումներից ոլարզվեց, վոր մեր արդյունաբերության զարգացման տեմպը բացառիկ արագությամբ և կատարվում: Այդպիսի արագ աճում աշխարհիս վոչ մի յերկրում չի տեսնված: Միաժամանակ մեր պետական ու կոռուպկերատիվ առեստուրը իշխող դիրք և գրավել, յևանդուն կերպով յետ մղելով մասնավոր առետրականին

թե մեծաքանակ և թե մանրածախս առետրի առարկղից :

Այսուամենայնիվ մենք գեռ առաջին քայլերն ենք անում սոցիալիստական վերակառուցման առարիգում : Ընդ ամին մեր սոցիալիստական շինարարության ճանապարհին մենք հանդիպում ենք զգալի դժվարությունների :

Այդ դժվարությունները զգացվում եյին VIII համադումարի նախորյակին պարենի հայթայթման առաջարիգում : Արդեն 1927 թվին մենք ունեցինք հացամթերման վորոշակի բուլացում, վորը խորհրդային իշխանությունից պահանջեց արտակարդ միջոցներ արդյունարերական բայուններին պարեն հայթայթելու համար : Այս տարվա անրերբիությունը մի շարք բայոններում զգալի դժվարություններ ե առաջացրել հացամթերքի ասպարիգում : Միանգամայն պարզուց և զարձել գյուղատնտեսության յետ մնալը արդյունարերության անումից : Առանձնապես յատ և մնում հացահատիկային տնտեսությունը, վորի դրությունը հետզհետե ավելի անհամապատասխան և գառնում սոցիալիստական հիմունքներով վերակառուցվող յերկրի կարիքներին : Գյուղատնտեսության հետամնացությունը դառնում է մի խոչընդու, վորը կասեցնում ե յերկրի ինդուստրիացումը և սահմանափակում ե մեր տնտեսական զարգացումը :

Դժվարություններ ենք զգում նաև հումքի

Հայթայթման առպարիզում : Կը ՀԵ-ն ամեն ան-  
ռակ հումքով հարուստ մի յերկիր է : Բայց հում-  
քային ոլոշաբներն սպասղործելու համար ան-  
հրաժեշտ է մեր արդյունահանության ամեյի մեծ  
զարգացում, քանի թե մենք այժմ ձեռք ենք ըերել:  
ՄԵնք ունենք բավականաշափ անտառն, վորովեսդի  
կաչու արդյունաբերության հայթայթումը լիս-  
ին ապահովված լինի : Սակայն մեզանում որո-  
կասում են զարադոզ նյութեր կազնու փայտից  
(Դ Ա Լ Խ Ա Կ Վ Ե Շ Ե Տ Յ) և կաշի մշակող  
ձեռնարկությունները չեն կարողանում բավակա-  
նաշափ հումք մատակարարել մեր կոչի զործա-  
րաններին : ՄԵնք կարող ենք լայն կերպով ծա-  
վարիլ բամբակի մշակությը թուրքեստանում:  
Բայց այդ զործը համեմատաբար նոր և և հա-  
վաքված բամբակն առայժմ միանդամայն չի  
հերիքում տեքստիլ զործաբանները ծանրաբեռ-  
նելու համար :

Ժողովրդական տնտեսության զարգացման  
համար խոչընդուռ հանդիսացող հանդամանք և  
հանդիսանում վո՞չ միայն հացահատելիք, վո՞չ  
միայն գյուղատնտեսուկան հումքային բաղան:  
Այդպիսի արգելափր հանգամանք և հանդիսա-  
նում առաջին հերթին ծանր արդյունաբերու-  
թյունը, ածուխի, յերկարի, չուգունի, առհա-  
սարակ մետաղի արտադրությունը: ՀԵՆց ծանր  
արդյունաբերության հետամնացությունն և, վոր  
գժիաբություններ և ստեղծում տնտեսության  
աճման և նրա ինդուստրիացման առպարիզում:

Մենք ունենք յերկաթի հսկայական հանգեր։  
Բայց մենք ուն մետաղի ոլակատ ենք դդում, վո-  
րովհեանե մեր հալոցների արտադրողականու-  
թյունը այնքան մեծ չէ, վորքան վոր հարկավոր  
եր։

Դոյություն ունի նաև ֆինանսական լարվա-  
ծություն։ Սոցիալիստական շինարարության  
դժվարությունները ավելի արագ կերպով հաղ-  
թահարելու համար մենք ովհուք և արագ կերպով  
փարրիկաներ և զործարաններ չինենք, դարձաց-  
նենք մեր ծանր արդյունաբերությունը, կառու-  
ցենք ելեկտրոկայաններ։ Այս բոլորը ուսանջում  
և հսկայական կաղիտալիների ներդրում։ Մենք  
արգեն ասել ենք, թե վերջին տարիների ընթաց-  
քում ինչ գումարներ են դրվել մեր հիմնական շի-  
նարարության մեջ։ Մեր առաջ խնդիր և դրված  
վոչ միայն աջակցել այլ և արագացնել ինդուս-  
տրացման տեմպը, այսինքն այն արագությունը,  
վորով մենք կառուցում ենք ձեռնարկություն-  
ները։ Այս տեսակետից են յեխում 1928-29 թվի  
վերստուգիչ թվերը, ուր նախատեսնվում է հիմ-  
նական ներդրումների և արդյունաբերական ար-  
տադրանքի աճումը 21 տոկոսով։ Այս տեսակետի  
հիման վերա յե կառուցված նաև ժողովրդական  
տնտեսության հիմքամյա ալանը։ Բայց հսկա-  
նալի յե, վոր այդ նշանակում և, թե բոլոր քիչ  
թե շատ «աղատ» միջոցները մեր պետությունը  
վերածում ե մեքենաների, զործարանային շեն-  
քերի և այլն։ Իսկ դրա հետեանքն ե լինում վո-

բուշ Փինանսական լարվածություն, նվազում են  
(իհարկե ժամանակավորապես) աղատ շրջանառու-  
միջոցները :

Սոցիալիստական տնտեսության աճման այս  
բոլոր դժվարությունները նրանով եւ բարդանում,  
վոր ժողովրդական տնտեսության վերակառու-  
ցումը խաչաղ, հանդիսաւ պրոցես չե, այլ կապ-  
ված եւ դասակարգային պայքարի հետ մեր յեր-  
կրում : Մանր-բուրժուական յերկրում պրոլետա-  
րիատի սոցիալիստական հարակումը առաջ ե  
բերում ազգաբնակության այն խավերի ակտի-  
վության անում, վորոնի ուղղակի քշնամի յեն  
բանվոր դասակարգին և վորոնի վորձում են ոգ-  
տագործել դժվարությունները իրենց ամրացնելու  
համար—նեպմանի, կուլակի, բուրժուական ին-  
տելիգենցիայի ակտիվության անում : Կապիտա-  
լիստական տարրերի դիմադրությունը յերկրում  
ավելանում ե : Դասակարգային պայքարն ել մա-  
նավանդ գյուղում սուր բնույթ ե ընդունում : Բան-  
վոր դասակարգին թշնամի խավերի պայքարի  
ձեերն ու արտահայտությունը չատ բազմազան  
են : Մենք տեսնում ենք կուլակության ուղղակի  
պայքար խորհրդային կառավարության միջոցա-  
ռումների դեմ, նրա բացահայտ յելույթների  
վերսկավելը (տեղական աշխատողների, դյուդ-  
թղթակիցների և այլն սպանություն) : Մյուս  
կողմից մենք տեսնում ենք բացահայտ տնտեսա-  
կան վնասարարություն (Շախտինսկի գործը),  
անտիսեմիտիզմի աճում, յեկեղեցականների աղ-

դեցության ուժեղացում և այլն։ Վերջապես մենք  
տեսնում ենք վորձեր զաղափարական-քաղաքա-  
կան աղղեցություն ցույց տալու վո՛չ միայն չքա-  
վոր ու միջակ գյուղացիության վրա, այլ և բան-  
վոր զասակարդի հետամմաց խավերի վրա։ Այս  
բոլորը տվյալ պայմաններում հանդիսանում են  
զասակարդացին ողայքարի ուժեղացում կապի-  
տալիստական տարրերի կողմից, կապիտալիզմի  
յելույթը՝ հարձակվող սոցիալիզմի դեմ։

Սոցիալիստական շինարարության հաջողու-  
թյունները միաժամանակ ուժեղացնում են կապի-  
տալիստական յերկրների ակտիվությունը, վո-  
րոնց շրջապատում առաջվա նման մնում և  
և ԱՀՄ։ Անդիայի աշխատանքը բուրժուա-  
կան ոկտությունների հակախորհրդացին բլոկ  
ստեղծելու ասպարիզում, Լեհաստանը ոլրովնտա-  
րական դիկտատուրայի յերկրի գեմ ուղղված  
զրահապատ բուռնցքի վերածելը, զինաթափման  
խորհրդացին առաջարկություններից հրաժարվելը—  
և փոխադարձարար իրար վրա չհարձակվելու  
պայմանադրերի ստորագրությունը ձգձգելը—  
այս բոլորը ցույց ետալիս կապիտալիստական աշ-  
խարհի աճող թշնամությունը դեպի ողայքարող  
սոցիալիզմի յերկիրը։

Սոցիալիստական վերակառուցման ժամանա-  
կաշրջանի հետ կապված դժվարություններն ա-  
ռաջ են բերում մանր-բուրժուայրական միջավայ-  
րում տատանումների ուժեղացում և մանր-բուր-  
ժուայրական տրամադրությունների ու կասկած-

ների աճում կուսակցության և խորհրդային իշխանության վերցրած կուրսի նկատմամբ։ Այդ տրամադրությունները փոխանցվում են նաև ըստվոր գասակարգի վորոշ խավերին, դիմավորապես նրա հետամնաց մասին։ Դժվարությունների յերկյուղից ծնվում են ինդուստրիացման տեմպը կասեցնելու, կուրակին «չնեղացնելու», սովորողների ու կոլխոզների շինարարությունը չուժեղացնելու ձգտումներ և այլն։ Այդ տառանումներն անդրադառնում են իրեն աջ թեքում կոմունիստական կուսակցության վորոշ մասի մեջ։

Աջ թեքման եյությունն այն է, վոր դժվարությունները վճռականապես հաղթահարելու և քաղաքում ու գյուղում սոցիալիստական վերակառուցման ուղիով համառ կերպով առաջ շարժվելու քաղաքականությանը հակադրվում և սպորտյունիստական քաղաքականություն՝ դյուղի սոցիալիստական վերակառության տեղ բացառապես անհատական գյուղացիական տնտեսության զարգացում, ինդուստրիացման տեմպի արագացման փոխարեն զանդաղեցում և այլն։ Արա հետ միաժամանակ աջ թեքման առանձնահատկություններից մեկն ել հանդիսանում և դասակարգային սպայքարի թերազնահատումը յերկրում, նրա նոր ձևերը չըմբռնելը և յերկրում դոյլություն ունեցող գասակարգային հակառությունները կատարալիստական և սոցիալիստական տարրերի միջև մեղմացնելու ձգտումը։

Ահա այն քաղաքական ու տնտեսական կացությունը, վորն ստեղծվել էր պրոֆմիությունների VIII Համագումարի ժամանակ : Այդ կացությունն էլ կանխորոշում և համագումարի ամբաղջ աշխատանքի աղղոթթյունը և ընդգծում ենրա վրոշումների նշանակությունը, իրեն և ԱՄԿ-ի բազմամիլիոն պրոլետարական մասսաների կազմակերպված կարծիքի բանվոր դաստիարակի քաղաքականության հիմնական հարցերում :

### ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VIII ՀԱՄԱԳՈՒԿՄԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ :

Պրոֆեսիոնալ միությունների VIII-րդ Համագումարը շարունակվել է 14 որ, 1928 թվի դեկտեմբերի 10—24-ը : Համագումարում ներկայացված էր պրոֆմիությունների 11 միլիոն անդամ : Այդ Համագումարի ընտրությունները կատարվել են ավելի զեմոկրատական ձևով, քանի բոլոր նախորդները : Խոշոր ձեռնարկություններում, ուր կային վոչ պակաս քան միության 5 հաղար անդամներ, պատվամավորների ընտրությունները կատարվել են միութենական և միջմիութենական կազմակերպությունների, իսկ շատ տեղերում նաև ՀԱՄԿԽ-ի ներկայացուցիչների զեկուցումները լսելուց հետո : Այսպիսով նախ քան ողագումամբորների ընտրությունը, փաստորեն կա-

տարվել է (թեև վոչ ամեն տեղ միահայտաբ) այս բոլոր հարցերի քննությունը, վորոնք պետք է իրենց լուծումն ստանային համամիութենական համագումարում։ Սակայն չի կարելի առել, թե համագումարի հարցերի նախնական քննությունը բավարար է յեղել։ Միությունների անդամների լոյն մասսաներն այնուամենայնիվ չեն քննել ինչպես հարկն է համագումարի որակարգում դրված հարցերը։ Յեզ այդ թերությունը, վոր մասնանշում է համագումարը, անհրաժեշտ է հետազայում ուղղել։

Համագումարին ներկա յեր 1,505 որատղամավոր, վորոնցից 1,131-ը վճռական և 374-ը խորհրդակցական ձայնով։ Անհրաժեշտ է ընդոզինել, վոր VIII համագումարն ավելի քան նախորդ համագումարներից վորեւե մեկը հանդիսանում եր ամբողջ միութենական մասսայի և նրա ինդուստրիալ կադրերի արտահայտիչը։ Պատգամավորների թվից համագումարին առաջին անդամ մասնակցում եր 71 տոկոսը։ Բանվորները կազմում եյին պատգամավորների մեջ 77,2 տոկոս, այն ինչ նախորդ համագումարում բանվորները կազմում եյին 75,4 տոկոսը։ Համագումարի 18 տոկոսը կազմում եյին կանայք (VII համագումարում միայն 7,5 տոկոս)։ Պատգամավորների մեջ 27,5 տոկոսն անկուսակցականներ եյին (անցյալ համագումարում միայն 14 տոկոսը), 2,7 տոկոս կոմյերիտականներ (VII համագումարում 1 տոկոսը)։ Համագու-

մարի անդամների ընդհանուր թվից 44 տոկոսը կազմում ելին աշխատողներ, վորոնք պրոֆեսիոնալ շարժման մեջ վոչ մի վարձու պաշտոն չունեն, այդ թվում՝ 26 տոկոսն արտադրության բանվորներ։ Համագումար ներկայացված եր 27 զանազան աղջություններ։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր համագումարը լիովին արտացոլել և արհմիություններում կազմակերպված մասսաների և ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի առանձին խմբակների կազմը։ Առաջին անդամն եր, վոր համագումարի աշխատանքին այդպիսի մեծ թվով միության շարքային անդամն եր, վոր համագումարին այդքան մեծ թվով անկուսակցականներ ելին ներկա։

Համագումարն անցնում եր չափազանց աշխույժ և պատրամավորների մեծ ակտիվության պայմաններում։ Այսպես որինակ՝ ՀԱՄԿի-ի հաշվետու զնկուցման առթիվ արտահայտվեց 91 հոկտոր, վորոնց թվում մոտ 40 տոկոս արտադրության բանվորներ։ Արտահայտվողների քանակը չատ մեծ եր նաև բոլոր մնացած զեկուցումների առթիվ։

Որակարգի բոլոր հարցերի առթիվ տեղի ունեցած մտքերի փոխանակության ընթացքը ցույց տվեց, վոր պրոֆմիութենական ակտիվն այդ տարիների ընթացքում խոշոր չափով աճել ։ Այդ առանձնապես նկատելի յեր շարքային բանվորների յելույթներից։ Յեթե առաջ արտադրա-

կուն բանվորները մեծ մասամբ խստում ենին բացառապես դործարանային դործերի ու մանր կենցաղային կարիքների մասին և իրենց ձեռնարկության սահմաններից չեցին դուրս դալիս, ապա VIII համագումարում նրանք չոշափում եյին դիմովորապես ընդհանուր խնդիրներ, բնոշհանուր հարցեր, դրանով իսկ հանդես բերելով իրենց կուրուրական ու քաղաքական աճումը։ Հառկապես նշանակալից եյին կին-պատկանավորուհիների յելույթները։ Այդ յելույթները յերեան հանեցին, վոր կին-բանվորուհին արդեն այժմ կարեսը դեր և խաղում պրոֆեսիոնալ շարժման մեջ և կարող և տեղ դրավել պրոֆաշխատող-տղամարդու հետ միասին։

Համագումարի որակարդք շատ ընդարձակ էր և պարաւնակում էր հետեւալ հարցերը։

1. ՀԱՅՄԿԻ-ի հաշվետվությունն ու վերըստուղիչ հանձնաժողովի զեկուցումը։

2. ԽԵՀՄ-ի պրոֆմիությունների Պրոֆինտերնի պատգամավորության հաշվետվությունը։

3. Ժողովրդական անտեսության դարձացման հնդամյա պլանը և հերթական խնդիրները։

4. Միությունների տարիֆ-տնտեսական աշխատանքը։

5. Միությունների կաղմակերպչական շինարարությունը։

6. Պրոֆեսիոնալ միությունների կուլտուրական խնդիրները։

A I  
8092

7. Պրոֆմիություններն ու կոռովերացիան :

8. Աշխատողկոմատի զեկուցումը :

9. ԲԳՏ աշխատանքը վարչա-տնտեսական  
և տնտերական ապարատի լավացման գործում  
ու պրոֆմիությունների մասնակցությունն այդ  
աշխատանքին :


10. ՀԱՄԿԻ-ի ու վերստուղիչ հանձնաժողո-  
վի ընտրությունը :

Այսպիսի կազմ ու աշխատանքի ծրագիր ու-  
ներ VIII համադումարը, վորը պեսք և ար-  
տահայտեր բաղմամիջինն բանվորական մասսայի  
վերաբերմունքը դեպի առեղծված քաղաքական  
ու տնտեսական կացությունը և զոններ ոլրոֆե-  
սիոնալ միությունների բոլոր հիմնական հարցե-  
րի լուծումը սոցիալիստական վերակառուցման  
ժամանակաշրջանում :

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻԾԸ  
ՎԵՐԱԿԱՌՈՒԻՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵԿ.  
ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ :

Հիմնական գիծն իր արտահայտությունն ե-  
ղանակ է ՍՀՄ-ի բանվոր դասակարդի ավանդարդի  
Համկոմկուսի (ր.) վորոշումների մեջ :

Համկոմկուսի (ր.) XV համադումարը և  
Համկոմկուսի (ր.) կենտկոմի նոյեմբերյան պլե-  
նումը պարզ ու հստակ վորոշել են այդ հիմնա-  
կան գիծը : Այսպես, Համկոմկուսի (ր.) կենտկո-  
մի նոյեմբերյան ուժում բանաձեռքի մեջ կար-  
դում ենք՝



«Կուսակցության Հիմնական խնդիրը՝  
նրա հիմնական գիծն և հանդիսանությանի-  
րի ենտագա ինդուստրիացման, ժողովրդա-  
կան տնտեսության սոցիալիստական սեկտո-  
րի հնարավորին չափ արագ անման, զյուղա-  
ցիության կոռպերացման, զյուղատնտեսա-  
կան արտադրության կոռուպերատիվ ձևերի  
(կոլխոզներ, սովխոզներ) անման գիծը և  
այլն։ Մե մետաղաղործության, մեքենաշի-  
նարարության, ելեկտրոշինարարության,  
բիմիական արդյունաբերության զարգացու-  
մը, գյուղատնտեսության ամեն կերպ ին-  
դուստրիացումն ու մեքենայացումը, արտա-  
դրության միջոցների, արտադրության տե-  
սակարար կշռի սիստեմատիկ բարձրացումը  
հանդիսանում են յերկրի, այդ թվում նաև  
գյուղատնտեսության հետագա զարգացման-  
անդայման նախադրյաները և առանձնապես  
անհրաժեշտ են դարձնում ամբողջ արտա-  
դրական պրոցեսի հետզհետե աճող բացիո-  
նալացումը, գիտության աճող կիրառումը,  
Արեմտյան Յեվլբուլյանի ու Ամերիկայի վար-  
ձի ու իմացությունների ամենալրիս ովտա-  
գործումը։ Մասսաները լայն կերպով սոցիա-  
լիստական շինարարության պրոցեսի մեջ  
ներդրավելու, այդ մասսաների նյութական  
բարեկեցության աճման, 7-ժամյա բանվո-  
րական որվա սիստեմատիկ անցկացման վրա  
հիմնված, տեխնիկական կաղըրերի աշխա-

տանքի վորակական բարձրացման և գիտության, տեխնիկայի, տնտեսական զեկավարման ու առհասարակ պրակտիկայի հետղհետեւ աճող միության վրա հիմնված՝ կուսակցությունը պետք է վճռականապես և ամուր կերպով շարունակի յերկրի ինդուստրիացման կուրսը :

Միջազգային կացությունը, կազիտալիստական պետությունների խոչորակույն տեխնիկական հաջողությունները, ուազմական սովորնալիքը և այլն, իրենց հերթին այդ խնդիրների իրակործումը դարձնում են միանդամայն անհետաձգելի :

Նկատի ունենալով կապիտալիստական յերկրներին տեխնիկական-տնտեսական տեսակետից հասնելու և առաջ անցնելու անհրաժեշտությունը, կենտրոնի ոլլենումը ցույց է տալիս, վոր այդ խնդիրների լուծումը հընարավոր և միայն արդյունաբերության զարգացման լարված տեմպի և յերկրի ինդուստրիացման ու կուսակցության, բանվորների ու գյուղացիական մասսաների մաքսիմալ զորահավաքի դեսպում» :

Բանվոր դասակարգի հիմնական գծի այս քննորոշման հետ միանդամայն զուգագիտում և նաև Միությունների VIII համագումարի քանաձել հնդամյա պլանի վերստուգիչ թվերի մասին, վորի մեջ ցույց է տրվում, վոր «ամենակարծ պատմական ժամանակամիջոցում առաջավոր

կապիտալիստական յերկրների բնողուստրիալ մակարդակին հասնելու, ապա նաև այդ մակարդակից առաջ անցնելու անհրաժեշտությունը, ծայրաստիճան հետամնաց գյուղատնտեսության բարձրացման և սոցիալիստական վերակառուցման խնդիրը, աշխատավորների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը և վերջապես յերկրի պաշտպանության շահերին անհրաժեշտ են գարճնում արդյունաբերության և առաջին հերթին արտադրության միջնորդների արտադրության զարգացման հնարավորին. չափ արագ տեմպերը»:

Միությունների VIII համագումարը, քընհնության առնելով բանվոր գտակարդի հիմնական խնդիրները, այսպիսով ամրողությամբ և լիովին հափառություն տվեց կառակցության ու կառավարության հիմնական գծին սոցիալիստական շինարարության ասպարիգում:

«Բանվոր դաստիարդի հիմնական խընդիրն և առաջիկա ժամանակաշրջանում յերկրի ինդուստրիացման ընդունմած տեմպի պահպանումը և նրա հետագա ուժեղացումը» (ՀԱՄԿԵ-ի հաշվետվության առթիվ ընդունած բանաձեկից):

Միաժամանակ համագումարը հավանություն տվեց հնդամյա պլանի կառուցվածքի ընդհանուր սկզբունքներին, վորոնք նշում են այդ հիմնական գծի իրազործումը:

«Արդյունաբերության զարգացման հընդամյա պլանը, վորք կառուցված և համաձայն XV կուսհամագումարի դիրեկտիվների, հիմնականում համագառասխանում է յերկրի բնդուստրիացման խնդիրներին (Հնդամյա պլանի վերստուգիչ թվերի մասին ընդունած բանաձեից) :

Խ՞ոչ և այս վորոշման խմասար :

ԺՃԳԽ-ի կողմից պրոֆմիություններէ! VIII համադումարին ներկայացված արդյունաբերության հնդամյա պլանը կառուցված և համաձայն XV կուսհամագումարի դիրեկտիվների և հիմնականում համագառասխանում է յերկրի բնդուստրիացման խնդիրներին: Այդ պլանը նախատեսնում է, վոր արտադրանքի աճումը բոլոր հինգ տարիների ընթացքում (1928-29—1932-33) տեսք և կատարվի համարյա համահավասար չափով, այն ինչ առաջ ծրագրվում ելին «հանգչող» կոր գծեր, վորոնք նախատեսնում ելին արտադրանքի աճման հետզհետե իջնող տեմոյ: Միջին հաշվով արտադրանքի տարեկան ավելացումը հինգ տարվա ընթացքում նախատեսնված է մոտավորապես 21-22 տոկոսով: Արտադրանքի աճումը հինգ տարվա ընթացքում յենթագրվում է 167,7 տոկոսով: Ընդ սմին՝ ավելի արտադրեալությունը (ծանր արդյունաբերություն)՝ 221 տոկոսով, այնինչ թեթև արդյունաբերությունը աճելու յե 130,2 տոկոսով:

Այսպիսով արտադրանքի աճմանը բավարար տեմ-  
պը ամբողջությամբ պահելով հանդերձ ասկա-  
հովում և արտադրության միջոցների արտա-  
դրության ավելի արագ աճումը, վորը հանդի-  
սանում և ինդուստրիացման հիմքը :

Հնդամյակի վերջում արտադրության նա-  
խաղատերազմյան մակարդակը պետք է յե-  
ռազատկիլի :

Ընդ սմբին նշվում և ինքնարժեքի իշեցում  
32 տոկոսով և չինարարության արժեքի ենա-  
նացում 47 տոկոսով : Այսուհետեւ պլանը յենթա-  
դրում և մշտական բանվորների թվի հավելումը  
հիմնական ձեռնարկություններում 740,000 մար-  
դով : Աշխատանքի արտադրողականությունը ա-  
վելանում և 95 տոկոսով, անվանական աշխա-  
տավարձը 35 տոկ. և ուեալ աշխատավարձը՝  
56 տոկոս :

Այս պլանի իրագործումը յենթադրում է  
հսկայական հիմնական ներդրումներ : Հիմնական  
աշխատանքների չափը (առանց ելեքտրոշինարա-  
րության) վորոշված և 12 միլիարդ 765 միլիոն  
ռուբլի, վորից 10 միլիարդը ընկնում և ծանր  
արդյունաբերությանը : Այս դումարը վերցնելիս  
հաշվի յե առնված նաև չինարարական ինդեքսի  
իջեցումը : Իսկ 1927-28 թվականի դներով հիմ-  
նական աշխատանքների ծավալը կկազմի 17 մի-  
լիարդ 940 միլ. ռուբլի : Այժմ վործող արդյու-  
նաբերության հիմնական կապիտալը, վորի ար-

ԺԵՔԸ 1927-28 թվականին կազմում եր 9 միլիարդ 700 միլ. ռուբլի, պետք է 1932-33 թվի վերջերին ըստ պլանի աճի մինչև 23 միլիարդ 366 միլ. ռուբլի:

Պլանը նախատեսնում է հնդամյակի վերջին ամբողջ արդյունաբերությունն անցկացնել 7 ժամյա բանվորական որվա: Այդ պլանը պարունակում է նաև նշանակալից չափով ծախսեր բանվորների կուլտուրական-կենցաղային կարիքների համար: Այսպես՝ բնակարանային շինարարության համար արդյունաբերության մեջ յենթադրվում է 5 տարվա ընթացքում ծախսել 1 միլիարդ 472 միլ. 800 հազ. ռուբլի: Յեզչնայած վոր բանվորների քանակությունը, ինչպես մենք վերը ցույց տվինք, ավելանում է ավելի քան 700 հազ. մարդով, յուրաքանչյուր բանվորին ընկնող բնակելի տարածության չափը մի փոքր ավելանալու յե: Յենթադրվում է, վոր ձեռնարկություններին պատկանող բնակարաններում ապրողների թիվը ավելանալու յե յերկու անգամ:

Ակումբներին, մասուններին, բաղնիքներին, լվացատներին և այլն, բացի այն ծախսերը, վորկատարվում էն, 5 տարվա ընթացքում լրացուցիչ կերպով հատկացվելու յե 100 միլ. ռուբլի: Բացի այդ, խոչոր ներդրումներ են կատարվելու ֆարզործուսի գողրոցների, տեխնիկումների կազմակերպման, ինչպես և բարձրագույն տեխ-

նիկական դպրոցների ղծով : Աւստի խնդիրն այն է, զորպեսզի մեր հիմնական ներդրումներից քաղենք ինչ վոր հնարավոր և և հետամռաւ լինենք, վորպեսզի մեր արդյունաբերության արտադրանքը հնարավորին չափ չառ աճի :

Այսպիսով VIII համագումարը իր հեղինակությամբ ամբաղնդելով ՓՏԳԽ-ի նշած արդյունաբերության հնդամյա ողանը, վորոշել է ամբողջ ոլրով շարժման վերաբերմունքը դեպի լանդուր դասակարգի հիմնական պիծը սոցիալիստական վերակառուցման ժամանակաշրջանում :

ԿՍՀՄ-ը մի յերկիր և, ուր դերակըում և մանր-բուրժուական դյուլացիական տնտեսությունը, վորը անխուսափելի լիորեն. իր միջից առաջացնում և կաղիտալիստական տարրեր : Առցիտիստական հարձակման պայմաններում այդ սուած և բերում դասակարգային պայքարի պրում : Թե՛ քաղաքի և թե՛ դյուզի կաղիտալիստական տարրերը ակտիվ կերպով հակահարձակման են անցնում :

Համ. կոմ. կուսի(ր) Նոյեմբերյան պլենումում, որինակ, լսվեց կուսակցության Հյուսիսային Կովկասի յերկրային կամխեցի զեկուցումը, վորի մեջ մատնանշվում եր դասակարգային պայքարի սրումը դյուզում անմիջապես կապված սոցիալիստական շինարարության աճման հետ դյուզում : Այդ զեկուցման առթիվ պլենումը նշեց, վոր

«Հյուսիսային կովկասում սերմանման  
կամպանիաների առթիվ ձեռք առնված մի  
շաբք միջոցների կիրառման փորձը, կոն-  
տրակտացիայի, գյուղմիահարկի, կոլտըն-  
տեսությունների շինարարության և կոռուկ-  
րազման անցկացումը ցույց են տալիս կու-  
րակալյին տարրերի աճած ակտիվությունը,  
վորոնք պայքարում են իրենց տնտեսական  
ու քաղաքական աղղեցությունը գյուղում  
պահպաննելու համար։ Դասակարգային պայ-  
քարի այդ սրումը, ոյսուղի կուլակային խո-  
մերի իրենց զրությունը ձեռքից չառլու-  
փորձերը արտահայտվում են ինչպես ուղ-  
ղակի հականեղափակոխական յելույթներով,  
ոյսուղթղթակիցների և այլն սպանություն-  
ներով, կաղակների ու յեկվորների գասային-  
հակամարտությունը զրոնական նախապատրում-  
ների ու հետամնացության ողտապորձմամբ,  
այնպես և ստորին խորհրդային, կոռուկա-  
տիվ, իսկ յերբեմն ել կուսակցական սպա-  
քատի առանձին ողակների վրա ներզործելու  
ու աղղելու փորձերով իրենց չահերը պաշտ-  
պաննելու իմաստով»։

Նույն ձեսով սրում և գասակարգային պայ-  
քարը քաղաքում, ուր կապիտալիստական տար-  
րերը սերմանում են աղղային թշնամություն,  
փորձում են բանվորական մասսաները հեռու-

պահել կուտակցությունից կրօնական աղանդների (բառարիստներ, մեթոդիստներ, մենոնիտներ և այլն) համառ և յեռանդուն աշխատանքի միջոցով և ամեն կերպ աշխատում են սպրդել խորհրդային իշխանության մարմինների մեջ։ Այսպիսի գործեր, ինչպիսին ե հրեա բանվորուհի Բարչային ծաղր ու ծանակի յենթարկելը, ինչպես Փոտո-ագրոնոմիական ինստիտուտի որհնումը պրոֆեսուրայի կողմից հրավիրված քահանայի ձեռքով, կրօնական աղանդների աղդեցության ուժեղացումը, հակառակութեարական ազդեցությունների մուտքը ուրականության, կինոյի, թատրոնի մեջ ցույց են տալիս բուրժուական, կապիտալիստական տարրերի հարճակումը քաղաքում։

«Սոցիալիզմի գործին թշնամի այս բալոր տարբերի ակնիվությունը առանձնապես արտահայտվում է ամեն մի չնչին դժվարության առթիվ, վոր կանգնում ե բանվոր գասակարգի առաջ սոցիալիզմի շինարարության ասպարիզում։ Աշխատավորների շարքերում այդ դժվարությունների չնորհիվ առաջացած ամեն մի տատանում բարենպաստ հող ե հանդիսանում, վորը փորձում են և զեռ շատ անգամներ կփորձեն ոգտագործել բանվոր դասակարգի թշնամիները։ Ահա թե ինչու նեպմանի, գյուղական կուլակի գեմ մզած համառ և հետևողական

պայքարը բանվոր դաստկարգի կարևորագույն հերթական խնդիրը, սոցիալիզմի հաջող շինարարության անօլույթան նախադրյալն և հանդիսանում» (ՀԱՄԿԽ-ի հաջիալության առթիվ ընդունված բանաձեից) :

Հետոն սրվող պայքարի և սոցիալիստական վերակառուցման ժամանակ ԽՄՀՄ-ի ապրած անխուսափելի դժվարությունների պայմաններում, հնարավոր և հավանական է վո՛չ միայն կազմակերպության տարրերի ակտիվություն աճումը : Այդ պայմաններում նույնիսկ կուսակցության առանձին անդամների դիմում, ել չխռովով բանվոր դասակարգի առանձին խոսքերի մասին, վորոնք յենթակա յեն բուրժուական սովորության, կարող են ծաղել և ծաղում են կասկածներ այն մասին, թե վորքան ճիշտ և կուսակցության վերցրած հիմնական դիմում, տառանումներ ինդուստրացման անցկացված տեմպի անհրաժեշտության խնդրի մասին : Համեստ-կուսիք (թ) 1928 թվի հուլիսյան ոլենումի նախորյակին նման տատանումների և կասկածների դոյցությունն արդեն անկասկած եր :

Այսուղից անհրաժեշտություն և առաջ զայն արոլետարիստի ամրող ուժերը համախրժ-քելու և բանվորների մեջ «քե՛ ինդուստրացման վերցրած տեմպի և թե՛ այդ նաևապարհին յեռած դժվարությունների հաղթահարման հերացվերաբյունների առթիվ» գոյություն ունե-

ցող տառանումների ու կասկածների դեմ պայ-  
տարելու համար :

Վորովհետեւ ԱՄՀՄ-ի պրոֆմիությունները  
հանդիսանում են համարյա բանվոր գտակարգն  
ամբողջությամբ բնդդրելող միություններ, ապա  
այդպիսի անհրաժեշտությունը մեր տուած, իրքի  
մի կաղթակերպության տուած, վորի շնորհիվ  
բանվոր գտակարգի ավանդարդը ամբողջ աշ-  
խատավորությանը սոցիալիզմի շինարարության  
ուղիով և տանում, մի շարք խնդիրներ և դիում:

Առաջին հերթին այդպիսի խնդիր և հանդի-  
սանում հենց պրոֆմիությունների ամբացումը,  
իրքի պրոլետարիատի ավանդարդը մասսաների  
հետ կապող շարժակուկի :

Այդ ամբացումը իր հերթին ավելի մեծ ու-  
շաղրություն և պահանջում դեռի բանվորների  
նյութական շահերը և դեռի նրանց կենցաղային /  
պայմանները (աշխատավարձի քաղաքականու-  
թյուն, սոցիալական ուղարկովադրություն, կոո-  
պերացիա), վորովհետեւ պրոֆմիությունների  
կողմից այդ ասպարիզում ինչպես հարկն և,  
դրված աշխատանքն և առահովում ամբողջ բան-  
միրական մասսայի ներքին շաղկառը պրոֆ-  
միությունների շարքերում :

Այնուհետեւ սոցիալիստական շինարարու-  
թյան ամբողջ դորձի հաջողությունը աղահո-  
վելու համար անհրաժեշտ և բանվորական մաս-  
սաների մասնակցության ուժեղացումը տնտե-

սական շինարարության մեջ, անհրաժեշտ ե յեռանդուն պայքար մղել բյուրոկրատիզմի, քաշ-քշուկների դեմ և մշտական առաջ քաշում պետական, տնտեսական, ոլրոժմիութենական ապարատի զանազան պաստերում աշխատելու համար արտադրական բանվորներ։ Աւրիշ խոսքով թշնամի կապիտալիստական տարրերի ընդդիմադրության աճմանը, տառանումներին ու յերերումներին, դժվարությունների առաջ յնդած պանթեյությանը պետք ե հակադրվի բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների ակտիվության մորիլիդացիան թե՛ քաղաքում և թե՛ դյուզում սոցիսլիստական վերակառուցման հետ կապված պրորեմների շուրջը, սոցիալիզմի հետադա շինարարության ճանապարհին կանգնած բոլոր դժվարությունների հաղթահարման հաստատ կամքը։ Մասնավորապես ամբողջ բանվոր դաստկարգի առաջ խնդիր և դրված ամեն կերպ պաշտպանել կուսակցության ուղայքարը լենինյան զծից թեքինյու փորձերի դեմ (տրոցկիզմ, ժանավանդ աջ վտանգն ու նրա նկատմամբ յեղած հաշովովականությունը)։

Պրոլետարիատի լայն մասսաները սոցիսլիստական շինարարության հիմնական ուրորչեմների լուծման համար զորահանվածքի յենթարկելու խնդիրը առաջ և բերում իմբնաֆնինադատությաւը զարգացնելու անհրաժեշտությունը, իբրև մասսաները վերակառուցման շրջանի հետ կապված

բոլոր խնդիրների լուծմանը մասնակից դարձնելու կարևորագույն պայմանը :

Այդ միենալուն խնդիրը պահանջում է ներմիութենական գեմոկրատիայի հիմունքների հընարավորին շափ ավելի լիակատար և բազմակողմանի ամրացումը, վորն իր հերթին տեղի կարող է ունենալ միայն այն ժամանակ, յերբ ճիշտ կերպով գրվի և խորացվի միությունների մասայական աշխատանքը և նրանց կողմից յեռանգուն, անդուլ աջակցություն ցույց տրվի կուլտուրական հեղափոխությանը, մասավանդ բանիոր գասակարգի հետամնաց խավերում :

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխությունը, մանավանդ, յերբ սրվում և դատակարգային պայքարը գյուղում, չափաղանց մեծացնում և գյուղում ապրող և աշխատաղ պրոլետարիատի գերը : Բանվոր դասակարգը պետք է գառնա կաղմակերպող ու վարող ուժ գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու ժամանակ :

Վերջապես նկատի ունենալով, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի կապը կապիտալիզմի լծի տակ ապրող պրոլետարիատի հետ հակայական նշանակություն ունի ամրող աշխարհի պրոլետարական հեղափոխության հաջողությունների և սոցիալիստական շինարարության հաջողությունների համար նրա միջնաբերդում, պրոլետարական դիկտուրայի յերկրում, VIII հա-

մազումարի առաջ դրված նյին պրոֆմիությունների միջաղգային աշխատանքի ծավալման խընդերները :

### ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VIII ՀԱՄԱ- ԳՈՒՄԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Տասնմեկ միլիոն բանվորների ու ծառայողների այս ներկայացուցիչները, վոր հավաքվել եյին պրոֆմիությունների VIII համագումարում, այդ խնդիրների լուծմանը ձևոնամուխ յեղան զինված այն փորձով, վոր պրոՓշարժումը կուտակել եր նախորդ յերկամյակում (վերջին համագումարից ի վեր): VIII համագումարի խնդիրներից շատերը պատկերանում եյին պրոՓմիությունների առաջ զործնական առորյա աշխատանքում և այդ աշխատանքի ընթացքում ել իրենց մասնակի լուծումն եյին ստանում: Այդ փորձը ամփոփելու համար և այդ փորձը սոցիալիստական վերակառուցման դրած խնդիրների լուծման ժամանակ զործադրելու համար, VIII համագումարը պրոՓկազմակերպությունների ամբողջ աշխատանքի հիմնական ստուգումը կատարեց:

Համագումարն արձանադրեց, վոր ողբոՓմիություններն իրենց աշխատանքի մեջ զդալի հաջողություններ են ձեռք բերել: ՊրոՓմիությունների աշխատանքի դրական հետեանքները կարելի յե լուսաբանել մի քանի թվական տվյալներով: Կատարվել ե պրոՓմիությունների թվա-

կան մեծ աճում : 1926 թվի հուլիսից մինչև 1928 թվի հուլիսը ԽՍՀՄ-ի պրոֆմիության անդամների թիվը աճել է 1 միլ. 782 հազար մարդով կամ 19 տոկոսով : Այդ պրոֆմիությունների անկատկած հաջողություն է :

Այդ ժամանակամիջոցում զգալի չափով աճել է նաև պրոֆմիութենական ակտիվի թիվը և լավացել է նրա սոցիալական կազմը : Ներկայումս պրոֆմիութենական ակտիվն իրնենից ներկայացնում է մոտավորապես մեկ ու կես միլիոնանոց մի հակայական բանակ : Բանվորների տոկոսը սոորյին պրոֆակտիվի շարքերում աճել է 54,8 մինչև 57,5 : Կանանց տոկոսը ավելացնել է 22,7 մինչև 24 և այլն : Շնորհիվ պրոֆակտիվի սխալմատիկ և յեռանդուն նորոգման, պրոֆմիութենական աշխատանքի մեջ են ընդդրկվում նորանոր մասսաներ :

Պրոֆմիությունները նշանակալից հաջողություններ են ունեցել պրոֆմիութենական դեմոկրատիայի ամրացման և լայնացման գործում : Միությունները զգալի չափով լավացրել են աշխատանքը ձևնարկության մեջ և՝ ծավալել են պրոֆմիութենական աշխատանքը ցեխում : Համագումարն արձանագրել է պրոֆմիությունների մասսայական աշխատանքի հաջողությունները՝ «Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱՄԿԿ-ի դեկադարության տակ զգալի հաջողություններ են ձեռք բերված միութենական մարմինների և անդամների մասսաների կապի ամրացնելու առաջ-

րիզում (պրոֆմիությունների մեջ նոր բանվորներ ներդրավելը, պրոֆակտիվի աճումը, աշխատանքի անցկացումը ցեխում, պրոֆմիութենական գեմոկրատիայի հիմունքների անցկացում և այլն) : (ՀԱՄԿԽ-ի հաշվեավության առթիվ ընդունած բանաձեկց) : Պրոֆմիությունների Փինանսական բաղան ամբացել է՝ 1926 թվին ստացվել և 98 միլ. 037 հազ. սուբլու անդամավճար, իսկ 1927 թվին 110 միլ. 172 հազար սուբլու : Բուլոր պրոֆկազմակերպությունների նյութական միջոցները 1928 թվի հունվարին կազմում ենին 57 միլ. 411 հազ. ս., վորը 1926 թվի հունվարի 1-ի ժեւ համեմատած տալիս և 46,7% աճում : Այդ ժամանակամիջոցում արագ կերպով աճել է պրոֆմիությունների կուլտ-կրթական աշխատանքը, աճել է կուլտհիմնարկների ցանցը, լուգացել է կուլտուրական սպասարկումը և այլն :

Զգայի չափով լավացել է նաև բանվոր դասկարգի նյութական զրությունը : Բանվորների ամսական աշխատավարձը միջին հաշվով նորչոր արդյուարերության մեջ ավելացել է 58,5 սուբլուց 1926-27 թվի առաջին յեռամսյակում մինչեւ 70,5 ս. 1927-28 թվի չորրորդ յեռամսյակում, այսինքն 20% : 1927-28 թվի չորրորդ յեռամսյակում բանվորների աշխատավարձը նախապատերազմյանին գերազանցում եր 27 տոկոսով :

Անցած ժամանակաշրջանում ավելացել է պրոֆմիությունների մասնակցությունը տնտեսական աշխատանքին, վորոշակի հաջողություն-

ներ են ձեռք բերված բանվորներին ու բանվորունքներին տնտեսական, խորհրդային և կոոպերատիվ աշխատանքի առաջ քաշելու ասպարիզում և այլն :

Համագումարը հավանություն տվեց ՀԱՄԿ-ի քաղաքական գծին ու զործնական աշխատանքին և նրա բանաձեի մեջ ասված և՝

«Զեկուցումը հաստատել : Մատնանշել, վոր ՀԱՄԿի-ը նիշտ և կատարել պրոֆմիությունների VII. համագումարի հիմնական դիրեկտիվները :

Գտնել, վոր ՀԱՄԿի-ի աշխատանքի ուղղությունն ու նրա բաղաքական գիծը նիշտ են և հավանություն տալ նրա պրակտիկ . գործունեյությանը հաշվետու շրջանում» : (ՀԱՄԿի-ի հաշվետվության առթիվ ընդունոծ բանաձեից) :

Սակայն իր գլխավոր ու շաղբությունը VIII համագումարը կենտրոնացրել և միութենական աշխատանքի թերությունների վրա : Այդ թերությունները բավական շատ զուրս յեկան : Դրանցից գլխավորներն են հետեյանները՝ ծանր արդյունաբերության բանվորների աշխատավարձը յետ և մնում թեթե արդյունաբերության աշխատավարձի աճման հետ համեմտած . վատ և զրված աշխատանքի սկաշտավանությունը . թույլ և տարկում պայքարը անդրագիտության գեմ . վատ են սպասարկվում զործագուրկները . բավարար չափով չի զրված բանվորների նոր կաղըրերի սպասարկումն ու դաստիարակությունը . չեն զա-

դարում և նույնիսկ ավելանում են վատնումները  
և տպն:

Բայց ամենալուրջ թերությունը համազու-  
մարը համարում է «առանձին պրոֆեշագմակեր-  
պությունների բյուրոկրատական, անսիրտ վե-  
րաբերմունքի դեպքերը բանվորների կարիքնե-  
րը, առանձին միութենական մարմինների բյու-  
րոկրատացումն ու կտրվածությունը մասսանե-  
րից, պրոֆմիութենական դեմոկրատիայի կողին  
խախումը, ինքնառնեադատության բույլ գար-  
գացումը»:

Համազումարը - մատնանշեց, վոր «սլրոֆ-  
միությունները զեռ նոր պիտի վճռական բե-  
կումն առաջ բերեն լայն բանվորական մասսանե-  
րի ինքնառնադատությունը զործնականում կի-  
րառելու ասպարիզում, տնտեսական և խորհր-  
դային չինարարության և ամենից առաջ հենց  
պրոֆմիութենական աշխատանքի թերություն-  
ները վերացնելու համար»:

Պրոֆմիութենական վորոշ կազմակերպու-  
թյունների մասսաներից կտրվածության ամենա-  
պայծառ որինակը Շախտինսկի զործն է: «Միայն  
բանվորական ինքնառնադատությունը խեղդված  
լինելու չնորհիվ, առվում և ՀԱՄԿԽ-ի հաշվե-  
տվության առթիվ ընդունված համազումարի  
բանաձեռում, և ժողովրդական տնտեսության  
կարեռագույն մասերից մեկը քայլայելու դեմ  
պայքարող առանձին բանվորների հալածանքի  
չնորհիվ կարող եր մի շարք խոշոր բանվորա-

կան՝ կենտրոններում մի շաբք տարիներ զոյտ-թյուն ունենալ սոցիալիզմի դործին թշնամի տարբերի համարյա անսահմանափակ տիրապե-տություն» :

Համագումարը պրոֆկազմակերպություն-ների խոչորակույն բացերից մեկն այն և համա-րում, վոր «պրոֆմիությունները մինչեւ այժմ բավարար չափով չեն ոգտագործել իրենց բոլոր հիմարավորությունները լայն մասսաները սոցիա-լիստական շինարարության գործի բոլոր դժվա-րությունները հաղթահարելու համար զբա-հավաքի յենթարկելու ասպարիզմ» :

Յեթե ամփափելու լինենք այն բոլորը, ինչ վոր համագումարն առել և միութենական աշխա-տանքի թերությունների առթիվ, առա մենք կը տեսնենք, վոր հիմնականում խնդիրը հան-դում և նրան, վոր պրոֆմիությունները գեռ չեն կարողացել իրենց աշխատանքն այնպես դը-նել, ինչպես այդ պահանջում և սոցիալիստա-կան վերակառուցման ժամանակաշրջանը :

Այսպիսով համագումարը պրոֆշարժման փորձի հաշվառումը լիովին կատարում և սո-ցիալիստական վերակառուցման մեջ բանվոր դասակարգի ունեցած հիմնական դժի տեսան-կյունով : Համահավասար չափով պրոֆշարժ-ման խնդիրների առթիվ ընդունած իր կոնկրետ վորոշումներն ընդունելիս նույնպես համագու-մարն առաջնորդվել է բանվոր դասակարգի այդ հիմնական դժով :

ՄԻՌԵԹՑՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄՆ ԻԲ-  
ՐԵՎ ՓՈԽԱՆՑՈՂ ՄԵԽԱՆԻՉՄԻ ԿՈՒ-  
ՍԱԿՑՈՒԹՑՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ:

Պրոֆեսիոնալ միությունները համարյա-  
ղիսովին ընդգրկում են բանվոր դասակարդը :  
Այդ միությունները հանդիսանում են պրոյե-  
տարական հեղափոխության հեղեմոն՝ կոմիու-  
սակցության ազգեցությունը բանվորների լայն  
խռովերին, իսկ նրանց միջոցով նաև դեպի գյու-  
ղացիության բազմամիլիոն մասսաները փոխան-  
ցող մեխանիզմը : Մեր յերկրի բանվոր դասա-  
կարդի առաջ պատճության կողմից դրված մեծ  
խնդիրները լուծել, բոլոր գժվարությունները  
հաղթահարել կարելի յէ միայն այն դեպքում,  
յեթե այդ փոխանցող մեխանիզմը—պրոֆմիու-  
թյունները—ինչպես հարկն ե աշխատեն, բանվոր  
դասակարդի խոտացրած կամքը հանձինո նրա  
կոմիուսակցության փոխանցելով աշխատավոր-  
ների ամենալայն խավերին :

Այդպես ե յեղել միշտ, պրոլետարական դիկ-  
տուտուրայի ամրողը ժամանակաշրջանում :  
Այժմ համարյա ամեն մի բանվոր դիտե Լենինի  
խոսքերն այն մտաին, թե «յերկիրը կառավարել  
ե դիկտուրայի իրականացնել առանց սերտ  
կազ ունենալու պրոֆմիությունների հետ, ա-  
ռանց այդ միությունների ջերմ աջակցության,  
առանց նրանց ամենամանձնուրաց աշխատանքի  
վոչ միայն տնտեսական այլ և ռազմական շինա-

բարության մեջ, մենք ի հարկե չելինք կարող վոչ միայն 2 և կես տարի այլ և 2 և կես ամիս» (Հենին, զործերի ժողովածու, II հրատ. XXV հատ. էջ 193—194): Յեզ այդ տեղի յեր ունենաւմ այն պատճառով, վոր կուսակցության կողմից զեկավարվող պրոֆմիությունների միջացով ամբողջ կուսակցությունը, բանվոր զասակարգի ամբողջ ավանդարդը, լայ և ժամանակին տեղեկանում ելին բանվորական մասսաների տրամադրություններին, պահանջներին ու կարիքներին և իրենց հերթին այդ պրոֆմիությունների միջոցով Կոմկուսակցությունը հնարավորություն և սուանում միշտ և ժամանակին բանվորական մասսաները ծանոթացնել իրենց առաջ զրված խնդիրներին և այն բանին, թե ինչպես և կուսակցությունն այդ խնդիրները լուծում ամբողջ բանվոր զասակարգի շահերին համապատասխան:

Այդպես և յեղել, կրկնում ենք, միշտ: Իսկ այնպիսի պայմաններում, յերբ ԽՍՀՄ-ն ապրում և սոցիալիստական վերակառուցման յեռանդուն շրջանը, վորի հաջողությունը միանգումայն և լիսպին կախված և ամբողջ բանվորական մասսաների պիտակից մասնակցությունից այդ շինարարությանը, պրոֆմիությունների դերը, իրրե վտանցող մեխանիզմի կուսակցությունից զեղի մասսաները, դասնում և բացառապես կարենք: Կուսակցությունը մշակում և բանվոր զասակարգի հիմնական գիծը սոցիա-

լիստական վերակառուցման ասպարիզում։ Առնը  
արդեն տեսանք, թե ինչումն է այդ գիծը։ Կու-  
սակցությունն այդ գիծն անց է կացնում մեր  
անսասական, քաղաքական և հասարակական  
կյանքում։ Բայց միայն այն զեղքում այդ հիմ-  
նական գիծը կդառնա մասսաների սեփականու-  
թյուն, յերբ պրոֆմիութենական համարյա յեր-  
կու միլիոնանոց ակտիվը՝ ստանալով կուսակ-  
ցության ապարատից միությունների ապարատի  
միջոցով այդ հիմնական գիծը, լայն կերպով  
կլուսարաննեն այդպիսին միութենական մասսայի  
առաջ և իրենց ամենորյա աշխատանքում, վորն  
ընդուրկում և բանվորին «որորոցից մինչեւ զե-  
րեզման» (ընկ. Տոմսկու բառերը), այդ գիծն  
անշեղ կերպով կանցկացնեն։ Այդ պատճառով  
բացառապես հոկայական և պրոֆմիությունների  
ամբացման ամբողջ դործի նշանակությունը,  
որովֆմիություններ, վորոնք փոխանցող մեխա-  
նիզմն են կուսակցությունից զեղի մասսաները,  
կուսակցական զեկավարությունը պրոֆմիու-  
թյունների նկատմամբ ամբացնելու դործը։

Այդ իրեն հերթին կիրագործվի «միայն այն  
զեղքում, յեթե պրոլետարական հեղափոխու-  
թյան հեգեմոնից՝ կոմկուսակցությունից զեղի  
լայն բանվորական մասսաները, իսկ նրանց մի-  
ջոցով զեղի զյուզացիության բազմամիլիոն  
մասսան տանող փոխանցող մեխանիզմը  
հստակ և անդադար կաշխատի։ Անհրա-  
ժեշտ և, վորպեսզի փոխանցող մեխա-

նիզմը—պրոֆմիությունները—անաղարտ կերպով աշխատեն, փոխանցելով բանվոր դասակարգի խոտացրած կամքն ի դեմս նրա ավանդարդի՝ Կոմկուսակցության գեղի աշխատավորների լայն մասսաները» (ՀԱՄԿԽ-ի հաշվետվության առթիվ ընդունած բանաձեից) :

Մենք տեսանք, վոր VIII համագումարն ընդունեց կուսակցության ու բանվոր դասակարգի հիմնական գիծը : Բայց այդ դեռ քիչ է :

Պրոֆմիությունների կարեռագույն խնդիրն եւ հանդիսանում բանվոր դասակարգի համախմբմարումը ; Նրա ամբողջ յեռանգի ու ստեղծադորձական ուժերի զորահավաքը խորհրդացին իշխանության ու կուսակցության կուբոր դեղի արոյունաբերության ու գյուղատնտեսության սոցիալիստական ինդուստրիացումն ու հենայեռանդուն կերպով պաշտպանելու և սոցիալիզմի շինուարության ճանապարհին յեղաւ բոլոր ինչնդունները հարթելու համար

Ահա հենց այս խնդիրը պետք է լուծեր VIII համագումարն իր բոլոր այն վորոշումներով, վորոնք գործնական յեղբակացություններ են նշում յելնելով բանվոր դասակարգի հիմնական զծից սոցիալիստական վերակառուցման դարաշրջանում պրոֆմիութենական աշխատանքի զանազան ճյուղերում : Վոր հարցն ել վերցնելու լինենք, լինի դա արդյունաբերության հնդամյա պլանը, միությունների տարիքային քաղաքականությունը, միությունների տնտեսական աշխա-

տանքը, նրանց կազմակերպչական կամ կուլտ-  
իքմական աշխատանքը, լինի դա պրոֆշարժման  
միջազգային քաղաքականությունը կամ Աշխատող-  
կոմատի և կոռուպերացիայի աշխատանքը—այս բո-  
լոր հարցերում պետք է արտահայտվեր և արտա-  
հայտվում եր այն հիմնական միտքը, վորով  
ներծծվություն եր համազումարի ամբողջ աշխատան-  
քը. այդ միտքն եր բանվոր դասակարգի հիմնա-  
կան դիմքը հետեւղական ու հստակ կերպով անց-  
կացնելու. և պրոֆմիություններն ամբացնելու  
անհրաժեշտությունը, պրոֆմիություններ, վո-  
րոնք փոխանցող մեխանիզմն են կուսակցությու-  
նից զեղի մասսաները:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՈՒՇԱԴՐՈՒ-  
ԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՆՐԱՆՑ ԿԵՆՅԱԼԱՑԻՆ  
ԿԱՐԻՔՆԵՐԸ.

Յեթե պրոֆմիությունները փոխանցող մեխա-  
նիզմն են կուսակցությունից զեղի մասսաները,  
առաջ միութենական առարատը պետք է կարողա-  
նա բավարարել բանվորի առորյա կարիքները,  
յեռանգուն և հետեւղական կերպով աշխատի  
նրա նյութական ու կենցաղային կարիքները հո-  
գալու վրա:

Պրոֆմիությունները կկարողանան կատարել  
իրենց զերն իբրև շարժավորկ ավանդաբեկց  
զեղի մասսաները միայն այն զեղքում, յեթե  
նրանց ամբողջ աշխատանքի ընթացքում մշտա-

կան հոգատարություն, ուշադիր վերաբերմունք  
լինի և առորյա պաշտպանություն ցույց տրվի  
այդ միությունների մեջ համախմբված մասսա-  
ների նյութուկան շահերի և կուրուր-կենցաղա-  
յին պայմանների նկատմամբ։ Այդ առանձնապես  
անհրաժեշտ և հիշել այժմ, դժվարաթյունների  
և միությունների ամրազ մասսայուկան ոչխո-  
տանքի ուժեղացման շրջանում։

«Վոչ մի բողք շմուանալով իրենց այդ կա-  
րեսազույն խնդիրը համբերատար և անդուդ  
կերպով բացատրելով աշխատավորների լորին  
մասսաներին պրոլետարիատի, նրա կուսակ-  
ցության, խորհրդային իշխանության հեր-  
թական դասակարգային խնդիրները, բան-  
վորներին կոչ անելով սոցիալիզմի շինարա-  
րության ձանապարհին յեղած դժվարու-  
թյունների հանդեպ կայունություն և կար-  
գապահություն ցուցահանելու, պրոֆմիու-  
րյունները պետք է միաժամանակ ուժեղա-  
ցնեն իրենց աշխատանքը բանվորների շահերը  
պաշտպանելու ասպարիզում, ամենառւշադիր  
վերաբերմունքը ցույց տալով դեպի բանվոր-  
ների առորյա կարիքների բավարարութը՝  
վճռական կերպով պետք է պայքարեն բան-  
վորական մասսաների առորյա կարիքների ու  
որինական պահանջների նկատմամբ ցուցա-  
բերված ամեն մի բյուրոկրատական մեծա-  
մտության դեմ, ուետք և զուրս դան հեղա-

վրախական որինականության ամեն տեսակի  
խորհուման դեմ : Առանձնապես անթույլա-  
տրելի յէ անփույթ վերաբերմունք ցույց  
տալը դեպի բանվորների ու բանվորունիների  
շահերն ու կարիքները պրոֆմիությունների  
ապարատի կազմից, բայց միաժամանակ  
միանգամայն անթույլատրելի յէ բանվոր  
դասակարգի ամենահետամնաց խավերին  
հարմարվելը (խվոստիզմ) պրոֆմարմիննե-  
րի ու առանձին պրոֆաշխատողների կող-  
մից» . (ՀԱՄԿԽ-ի հաշվետվության առթիվ  
ընդունված բանաձեից) :

Պետք է մատնանշել, վոր մասսաների  
նյութական պահանջները բավարարելու ասպա-  
րիզում միություններն զգալի հաջողություններ  
են ունեցել : Ինչպես մենք արդեն վերև ասացինք  
աշխատավարձը յերկու տարվա ընթացքում աճել  
է 20 %, 1927—28 թվի վերջին յեռամսյակում  
հասնելով միջին հաշվով ամբողջ արդյունարե-  
րության մեջ նախապատերազմյանի 127 %-ին :

Այդ ժամանակաշրջանի բանվորական բյու-  
ջենների հետազոտությունը ցույց է տալիս բան-  
վորական ընտանիքի բյուջեյի բացարձակ աճում  
և ավելի թանկարժեք ու սննդարար մթերքների  
գործածության ավելացում, ինչպես և հագուս-  
տի, բնակարանի վրա և այլն կատարվող ծախսե-  
րի բարձրացում, վորը վկայում է բանվորական  
բյուջեյի ավելի բարձր կառուցվածքի մասին :

Աշխատավարձի աճումը կատարվել է աշխա-

տանիքի արտադրողականության բարձրացման  
հիման վրա : Յեթե վերցնենք վերջին յերեք տրն-  
տեսական տարվա տվյալները, ապա մենք կը  
տեսնենք, վոր 1925-26 թվից մինչև 1927-28  
թիվը<sup>\*)</sup> միջին ընդհանուր արտադրանքը մի աշ-  
խատած որվա համար նախապատճերազմյան  
դներով աճել է 8 ռ . 42 կ . մինչև 10 ռ . 77 կ .  
կամ 27,9 %-ով : Իսկ բանվորի որական աշխա-  
տավարձը այդ միջոցին աճել և անվանական  
արտահայտությամբ 195, % -ով , իսկ ունակ ար-  
տահայտությամբ՝ 19,6 % -ով : Այսպիսով աշ-  
խատանքի արտադրողականությունը ավելի ա-  
րագ է աճել քան աշխատավարձը : Առանձնապես  
նկատելի բեկումն առաջ է դալիս 1927-28 թվին,  
յերբ աշխատանքի արտադրողականությունն ա-  
ճում է 14 % -ով , իսկ որական աշխատավարձը՝  
8,5 % -ով :

Անցած ժամանակամիջոցում որովմիու-  
թյունները մեծ աշխատանք են կատարել աշ-  
խատանքի վարձատրության սիստեմները կար-  
գավորելու առաջարիկում : Անց և կացված տա-  
րին Փային ուժումը , մացված են նոր տարի Փային  
ցանցեր և այդպիսով զգալի չափով վերջ է դրված  
աշխատավարձի վրա կատարվող դանաղան «Հա-  
վելումների» , մեծացվել է տարի Փային դրույքի  
գերն և կատարվել է ձեռնարկներում բանվոր-  
ների աշխատավարձի մոտեցում և ցածր վար-

<sup>\*)</sup> 1927-28 թվի տվյալները նախնական  
տվյալներն են :

ձառրվող խմբերի առաջքաշում : Տարիքային ոեփորմը արգեն ընդդրկել և արդյունաբերության մեջ զբաղված բանվորների մոտ 80 %-ը : Գործարքային աշխատանքները 1927 թվի դեկտեմբերին կազմում ենին միջին հաշվով տարիքային դրույքի 56,1 %-ը , իսկ 1928 թվի մարտին՝ 31 %-ը : Թե ինչպես և տարիքային ոեփորմը ազգել բանվորների աշխատավարձն երար մոտեցնելու վրա , յերեւում և նրանից , վոր 1926 թվի մարտին միջին աշխատավարձի կեսից պակաս ստացող բանվորների թիվը կազմում էր 13,4 տոկոս , իսկ 1928 թվի մարտին՝ 8,5 տոկոս : Կեսից մինչեւ լիակատար միջին աշխատավարձ ստացողների թիվը աճում է 42,9 %-ից մինչև 48,2 տոկոս : Ավելի քան յերկու միջին աշխատավարձ ստացողների թիվը 6,3 %-ից իջնում է մինչև 5,1 % : Ուրեմն իջել և յերկուծայրահեղ խմբերի՝ թե միջինից ավելի ցածր և թե՛ ավելի բարձր աշխատավարձ ստացողների թիվը :

Սակայն չնոյած աշխատավարձի կարգավորման մեջ յեղած այսպիսի հաջողություններին , մենք նկատում ենք մի շարք միանդամայն բացասական յերեւույթներ : Ծանր արդյունաբերության աշխատավարձի աճումը հետ և արդյունաբերության աշխատավարձի աճումից : Յեթե արդյունաբերության բոլոր ճյուղերը դասավորենք ըստ միջին աշխատավարձի բարձրության ապա մենք կտեսնենք , վոր առա-

ջին տեղն և բոնում բեղինի արտադրությունը (101,3 ո.) , սե մետաղի արտադրությունը՝ 14-րդ տեղը , իսկ քարածուխինը՝ 22-րդ տեղը (60,1 ո.) : Այսպիսի դրությունը անշուշտ անհորժալ է : Այդ վրությունը չի համապատասխանում յերկրի ինդուստրացման և ծանր արդյունաբերության ավելի արագ զարգացման կուրսին :

Ահա թե ինչու համապումարը տարիք-տրնտեսական աշխատանքի առթիվ ընդունած բանաձնում դանում է , վոր «արոֆմիությունների աշխատավարձի քաղաքականության հիմքը պրոլետարիատի գիլտատուրայի պայմաններում ողիսի կազմի աշխատավարձի մեծության չափի խստիվ համաձայնեցումը յերկրի իրական տնտեսական գրության հետ և բանվոր գաստկարգի հերթական տնտեսական խնդիրների հետ :

Դրանից յենելով և հաշվի առնելով արդյունաբերության ու աշխատանքի արտադրողականության աճման տեմպը տնտեսության հնդամյա պլանի մեջ , համագումարն անհրաժեշտ դրամավ , վորպեսդի մոտակա հնդամյակում արդյունաբերության ու տրանսպորտի բանվորների միջին ուեալ աշխատավարձի աճումը ուղահովվի առնվազն 50 % -ով :

Աշխատավարձի հետագա կարգավորման կենարոնական խնդիրը պետք է հանդիսանա համաձայն համագումարի վորոշման՝ «աշխատավարձի բարձրացման ճիշտ բաշխումը թե ար-

դյունարերության ճյուղերի և թե առանձին  
ուայսների միջև», այն պայմանով, վոր աշխա-  
տավարձի համելումը կատարվի առաջին հեր-  
թին և ավելի մեծ չափով մետաղի և ածուխի  
արտագրության մեջ, միաժամանակ առաջ քա-  
շելով տեքստիլում աշխատողների աշխատավար-  
ձը, վորոնք զգալի չափով հետ են մնում ար-  
դյունարերական բանվորների աշխատավարձի  
միջին մակարդակից։ Աշխատավարձի ավելի հա-  
ջող կարգավորման համար անհրաժեշտ է շա-  
րունակել աշխատավարձի աճման պլանային  
կարգավորման քաղաքականությունը։

Համագումարը վորոշեց շարունակել տարե-  
ֆային ուժորմը, կատարել վորակյալ և ան-  
վարժ բանվորների աշխատավարձի հետագա-  
մերձեցում, կարգավորել աշխատանքի վար-  
ձատրության դործարքային և պրեմյալ սիստե-  
մի կիրառումը և խիստ բարձրացնել թե՛ պրոֆ-  
միությունների և թե՛ մանավանդ տնտեսական  
մարմինների շափակորման աշխատանքի մակար-  
դակը։ Հավաքական պայմանագրերի սիստեմը  
ճանաչվել է հետագայի համար ևս իրեն աշխա-  
տանքի պայմանների ու աշխատավարձի  
կարգավորման հիմնական մեթոդ։ Բայց  
միաժամանակ պետք է ուժեղացվի պայ-  
մանագրերի մասսայական ուսումնասիրու-  
թյունը, պարզեցվեն պայմանագրերը, ա-  
վելի պարզ կերպով խմբագրվեն կե-  
տերը, կրծատվի բանակցությունների ժամկետ-

ները, վճռական կերպով վերացվեն բանակցությունների ձգձգումները։ Միությունների կարևորագույն խնդիրն է սիստեմատիկ պլանային ստուգում կատարել և խնամքով հետեւել, վորտնտեսական մարմինները կատարեն զործող համագործական ոլայմանագրերը։

նից մի լավ թափ և տալիս և քրքրում և և  
այդ բանվորն այլևս դուրս չի դա: Ճիշտ և  
նման գեղքում այսպիսի պատասխանը ինք-  
նաքննադատության հանդեպ անմիջական-  
վարչական ճնշում չե: Դա վոչ-ընկերական  
վիճարանություն և, անհավասար զենքով  
կատարվող կոփի և: Ստեղծել ընկերական  
քննադատություն, ընկերական վիճարա-  
նության մթնոլորտ, ընկերական վերաբեր-

մունք դեպի բանվորների քննադատությունը, վորոնք կարող են առանձին մասերում թեկուղ և սխալ լինել—ահա որովհմիությունների հերթական խնդիրը» :

Միությունների աշխատանքը ինքնաքննադատությունը ծավալելու ասպարիզում առանձնապես ուժեղացնելու անհրաժեշտության մասին համառ կերպով խոսում եր միությունների աշխատանքի մինչև VIII համագումարը յեղածամբողջ փորձը : Այդ փորձի մեջ կան այնպիսի սե եջեր, ինչպիսին ե Շախտինսկի գործը, Արտեմովսկի, Սմոլենսկի գործերի դրությունը : Համագումարը նշեց, վոր

«Միայն բանվորական ինքնաքննադատությունը ճնշելու պայմաններում և չնորհիլ ժողովրդական տնտեսության կարևորագույն մասերից մեկի քայլքայման դեմ պայքարող առանձին աշխատողների հալածանքի կարող եր մի շարք խոշոր բանվորական կենրոններում մի շարք տարիների ընթացքում ծաղկել սոցիալիզմի գործին թշնամի տարրերի համարյա անսահմանափակ տիրապետությունը : Այն հանգամանքը, վոր այդպիսի վնասարարությունը շարունակվել ե մի շարք տարիներ և չի բացվել միութենական կազմակերպությունների կողմից տեղերում, վորոնք տվյալ դեպքում բյուրոկրատական

վերաբերմունքի կլասիկ որինակն են տվել  
գեղի բանվորների ձայնը, վորոնք շարու-  
նակ նախապդուշացրել են իրենց կաղմակեր-  
պությունները վնասարարների հակահեղա-  
փոխական գործունեյության մասին, ինչ-  
և այն, վոր համապատասխան միութենա-  
կան կաղմակերպությունները չեն կարողա-  
ցել հարկ յեղած աղջեցությունն ապահովել  
մի շարք կարևորագույն անտեսական մար-  
ժինների նկատմամբ, ուր վնասարար տար-  
քերը բուն ելին դրել—այս բոլորը ապա-  
ցույց ե պրոֆմիութենական մարմինների  
կորվածությանը մասսաներից և նրանց  
թույլ աղջեցությանը անտեսական մարմին-  
ների աշխատանքի վրա»:

Ահա թե ինչու

«Արտեմովսկի, Սմոլենսկի, ինչպես և  
Շախտինսկի և ուրիշ նման գործերի դասե-  
րը, վորոնք հայտնաբերեցին պրոֆմիութե-  
նական ապարատի աշխատողների առանձին  
խմբերի քայլայումը, իրեւ մասսայից կը-  
տրված լինելու հետեանք, պետք և խնամ-  
քով, բաղմակողմանի կերպով հաշվի առ-  
նվեն և միությունների ամբողջ աշխատան-  
քը վերեից ներքեւ այնպես պետք է կառուց-  
վի, վորպեսզի նման գեղքերի կրկնու-  
թյունը հնարավոր շլինի։ Յուրաքանչյուր  
միութենական կաղմակերպության աշխա-  
տանքը պետք է առաջին հերթին չափովի

վոչ միայն ապարատի հստակ աշխատանքով, այլ և գլխավորապես մասսաների հետ ունեցած կազի ասղարիզում յեղած նըգաճումներով»:

Դրանով ե բացատրվում այն հանդամանքը, զոր իր բանաձևերում (թե՛ ՀԱՄԿԽ-ի հաշվետվության և թե՛ միությունների կաղմակերպչական ու կուլտ-կրթական աշխատանքի առթիվ ընդունված) VIII համագումարը առանձնապես ընդծում ե ինքնաքննադատության բացառիկ նշանակությունը:

«Մակայն, ինչպես այդ մասին ասում երի հաշվետու զեկուցման մեջ ընկ. Տոմոկին, ընտրականությունը, ինքնաքննադատությունը, պրոլետարական դեմոկրատիայի ծավալումը, այս բոլորը լրիվ չի լինի մեր դասակարգի համար, վորն իրավործում և պրոլետարիատի դիկտատուրան, հանդիսանում ե պետական իշխանության մասնակիցն ու արտադրության տերը, վորին հարկավոր ե մաքսիմալ տոկումություն ու կայունություն, վոչ մի դեմոկրատիա լրիվ չի լինի առանց մի ելեմենտի՝ առանց դիսցիպլինայի: Դեմոկրատիան յենթադրում ե դիսցիպլինա և վոչ թե բացասում: Ի՞նչ ոգուտ մեր դեմոկրատիայից, յեթե մեծամասնությունը քվեարկի «թեր», փոքրամասնությունը «դեմ»՝ իսկ փոքրամասնությունը մեծամասնության յենթարկվելու փոխարեն ասի՝ «նե-

բեցեք, ձեր արածը զուք զիտեք, խսկ մենք եւ  
մեր զիտցածի նման կանենք»: Վոչ մի դեմոկրա-  
տիս չի լինի, յեթե ամեն մեկն անց կացնի այն  
զիծը, վորը ցանկանում է»:

Ահա թե ինչու VIII համազումարը ցույց  
տվեց, վոր

«Միութենական կազմակերպությունը կարող  
է ամուր և աշխատունակ զառնալ միայն նրա  
մեջ միացած բանվորական մասսաների կազմա-  
կերպվածության և կարգապահության բարձր  
մակարդակի դեպքում: Արձանագրելով միութե-  
նական զիսցիսլինայի խախտման առանձին փաս-  
տեր և միությունների աշխատանքի թուլու-  
թյունն այդ կարգապահությունն ամրացնելու  
առավարիզում, անհրաժեշտ և հետապայում այդ  
խնդրին լուրջ ուշադրություն դարձնել ամենոր-  
յա միութենական աշխատանքի ընթացքում: Մեծ  
նշանակություն ունի սլրոֆմիութենական զիս-  
ցիսլինայի ուժեղացման համար միութենական  
վորոշումների և մանավանդ միութենական կա-  
նոնագրության ու հավաքական պայմանագրի  
ժաղովրդականացումը»:

Միութենական զիսցիսլինան ամրացնելու  
կարևորագույն միջոցը համարելով մասսայական  
դաստիարակչական և բացատրական աշխատանքի  
լայն ծավալումը, համագումարն անհրաժեշտ և  
համարում միութենական զիսցիսլինայի ամե-  
նից ավելի խիստ խախտումների դեպքում (խո-  
լոգանական վարմունքի դեպքեր, հավաքական

ողայմանադրի և ներքին կարդ ու անոնի սխառեմատիկ կոպիտ խախոռում, նպաստ ստանալու համար կատարված ակնհայտ չարագործություններ և այլն) դաստիարակչական բնույթ կրող միջոցների հետ միասին և բանվորական մտասաներին նման վաստերի անթույլատրելիությունը լայն կերպով բացառելով հանդերձ, կիրառել հանցավորների վրա հասարակական ազգեցություն դործադրելու միջոցները, մինչե իոկ միությունից հետաքննելը, այդ վարոշումներին անցկացնելով բանվորական ընդհանուր ժողովներով» :

Պրոֆեսիոնալ միությունների առաջ դրված պատասխանատու խնդիրները կարող են լուծվել միայն պրոֆմիութենական շարքերի ամենամեծ միասնականության և համախմբվածության դեպքում: Աւատի համագումարը մատնացույց և անում ԽՍՀՄ-ի պրոֆմիությունների կառուցվածքը դիմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով պահպանելու և վճռական պայքար մզելու անհրաժեշտությունը «Փեղերավովմի, սեպարատիվմի, առաջնության պատմի», մեկուսացման և միության անդամների առանձին խմբերի և առանձին բայոնների շահերն ամբողջ պրոֆշտրման և բանվոր դասակարգի շահերին յինթարկել չուղենալու վեմ» :

Բանվոր դասակարգի շարքերը համախմբելու նպատակով անհրաժեշտ է վարձու աշխա-

տանքի լուսը խմբերի բաղմակողմանի ու լիտ-  
կառար սուսարկումը :

Ահա թե ինչու համադումարը հանձնարա-  
րում և ՀԱՄԿԵ-ին առաջվա նման անցկացնել բո-  
լոր միութենական կազմակերպությունների և  
բանվորների ու ծառայողների առանձին խմբերի  
ու խովերի կարեքների նկատմամբ միատեսակ  
ու շաղիքը վերաբերմունքի գիծը, պաշտպանել  
նրանց տնտեսական, կուլտուրական և կենցաղա-  
յին շահերը, վերջիններս համաձայնեցնելով  
բանվորների ու ծառայողների ուրիշ խմբերի շա-  
հերին, այս բոլորը վերջին հաշվով յենթարկե-  
լով պրոլետարիատի ընդհանուր դասակարգային  
շահերին» :

Այսպես և վորոշել պրոֆմիությունների VIII համադումարը պրոֆշարժման հիմնա-  
կան ինդիբները մասսաները համախմբելու աս-  
պարիզում, կազմակերպչական աշխատանքի աս-  
պարիզում մոտակա տարիների ընթացքում : Այս  
և այս ուղղությունը, վոր տվել և համադումարը  
պրոֆկազմակերպությունների այդ աշխա-  
տանքին :

Այս բոլորն ամրացնում և պրոֆմիություն-  
ներն իրեն փոխանցող մեխանիզմ կուսակցու-  
թյունից դեպի մասսաները, դարձնում և այդ  
միությունները մի դժայուն ապարատ, վորն ա-  
րագ և ճիշտ կերպով ցույց է տալիս, թե ինչով.  
և հուղվում և ապրում ամբողջ բանվորական

մասսան, ինչպիսի նա կարիքներ, ցանկություններ ու արամագրություններ ունի և միաժամանակ այնպիսի մի աղջարատ, վորն ի վիճակի յե հստակ և բազմակողմանի կերպով լուսարաններ այդ մասսայի առաջ բանվոր դասակարգի հիմնական գիծը, ի մի համախմբել պրոլետարիատի առանձին խմբերը բոլոր բանվորների համար գործունեյության միասնական մի ծրագրի հիման վրա:

## ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԵՏԱ- ՄՆԱՑ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԳՅՈՒՂԱԽՄ

Ինչպիս տեսանք, VIII համագումարի վորոշումները պարզ, հստակ դիրքավորում են տալիս պրոֆմիությունների ամբողջ աշխատանքին: Այդ դիրքավորումը նպատակ ունի վորքան կարելի յե լայն կերպով ներգրավել հենց բազմամիլիոն միութենական մասսան սոցիալիստական շինարարության մեջ: Համկոմիուսի (բ.) զեկավարության տակ այդ մասսաները համախմբմբելով նրանց (մասսաների) ամենորյա նյութական կարիքները և կենցաղային պահանջները յաջարարելու հիման վրա, պրոֆեսիոնալ միություններն իրենց մասսայական-տնտեսական աշխատանքի միջոցով, իրենց ամբողջ գործունեյության մեջ հետեւղական կերպով անցկացնելով ներմիութենական գեմոկրատիան և ծավալելով ինքնազնակարգությունը, ստեղծում են անհրաժեշտ ոլայմաններ ամենից լրիվ, ամենից բազմա-

կողմանի և բանվոր դասակարգի շահերին համապատասխանող ձեռվ միության անդամների մասնակցության համար ԽՍՀՄ-ի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին :

Բայց VIII համագումարն ստիպված յեղալի իր ուշադրությունը բնեռել նաև պրոֆմիություններն մասսայական աշխատանքն ամրացնելու, միությունների անդամներին ավելի լավ սպասարկելու, նրանց դաստիարակային դաստիարակության խնդրի վրա, մանավանդ բանվոր դասակարգի հետամնաց խավերի, մասնավորապես դյուզի հետ կապված բանվորների (սեղոնային բանվորներ, բատրակություն, դյուզում դտնվող ձեռնարկությունների բանվորներ և այլն) նըկառմամբ :

Ամբողջ պրոֆշարժման ուժն զգալի չափով թուլանում է նրանով, վոր պրոֆմիությունների մեջ համախմբված բանվորական խմբերի շարքերում զյություն ունեն վոչ միայն կայուն, ոլիմացկուն դասակարգային մարտիկներ, պրոլետարիատի հիմնական կաղըրեր. մենք ունենք դեռ յերեկ ինքնուրույն գյուղացիական տնտեսությունից կտրված և դեռ ևս գյուղացիական տըրամաղբությունների ազդեցության տակ ապրող նոր կաղըրերի մշտական և շարումակ աճող հոսանք դեպի արտաղբությունն ու այնտեղից ել դեպի պրոֆմիությունները : VIII համագու-

մարից սկսած յերկու տարվա ընթացքում  
միությունների անդամների թիվն աճել է հա-  
մարյա 2 միլիոնով՝ 9,278,400-ից մինչև  
11,060,400 մարդ։ Վո՞րտեղից և պրոֆմիութե-  
նական բանակի այդ լրացումը։ Պատասխան տա-  
րիս և մեղ աշխատանքի բորսայի վիճակովը ու-  
թյունը, ուր առանձնապես արագ կերպով աճում  
և իրենց կրանքում տուաջին անդամ վարձու աշ-  
խատանք վնասող և զլավորապես զաւողից  
Դուրս յեկած ցուցակազրված բանվորների թի-  
վը։ «Գործազուրկների թույլ վորակը և  
գյուղից դուրս յեկածների լույն մուտքն  
արտադրության մեջ—կարգում ենք մենք  
ՀԱՄԿԵ-ի կողմից VIII համագումարին  
ներկայացված հաշվետվության մեջ—հաշ-  
վետու ժամանակամիջոցում նպաստել են  
գործազրկության կայունացմանը միության  
անդամների շարքերում։ Իսկ նոր կազմերի  
նման հոսանքը նշանակում է բանվորների կող-  
մից ակտիվ հասարակական աշխատանքի համար  
ունեցած պատրաստականության անկում, նրանց  
կողմից վեպի արտադրության բախտն ունեցած  
հետաքրքրության անկում և զբան հետեանքով  
սոցիալիստական շինարարության մասնակցելու  
ձգտման թույլացում։ Ուստի միանդամայն ընս-  
կան և, վոր VIII համագումարը թե՛ կազմա-  
կերպչական և թե՛ կուլտ-կրթական աշխատանքի  
առաջարիդում տուանձին վորոշումներ և ընդունել

նոր և հետամնաց կաղքերի սպասարկման մտախն :  
Այսպես, կազմակերպչական աշխատանքի մտախն  
յեղած բանաձեռում մենք կարդում ենք՝

«Արդյունարերության ընդլայնման կո-  
ղակցությամբ, Փարբիկաներն ու գործա-  
րանները, ուրեմն և պրոֆմիությունները  
յցվում են նոր բանվորների զգալի կաղքե-  
րով, վորոնք գյուղից են յեկել : Բանվոր զա-  
սակարգի այդ մասը, վորը չի իմացել մինչ-  
հեղափոխական Փարբիկան և դասակար-  
գային պայքարի փորձ չունի, դասակարգու-  
յին տեսակետից ամենից քիչ և կայուն, ա-  
մենից ավելի հեշտությամբ և մանր-բուր-  
ժուական տարրերի աղջկցության յենթարկ-  
վում և հաճախ գործարաններն ու Փարբի-  
կաներն և բերում զուտ սպառողական արա-  
մագրություններ :

Պրոֆմիությունները պարագայոր են բո-  
լոր իրենցից կախված միջոցները ձեռք առ-  
նել այդ նոր բանվորներին ընդհանուր պը-  
րուկարական շարժմանը մասնակից դար-  
ձնելու համար : Առանց արհամարհական վե-  
րաբերմունք ցույց տալու դեպի գյուղից  
դուրս յեկած բանվորական նոր կաղքերը,  
պրոֆմիությունները պետք ե. համբերու-  
թյամբ, ընկերաբար և սիստեմատիկ կեր-  
պով դաստիարակեն նրանց մեջ գիտակցա-  
կան վերաբերմունք դեպի սոցիալիստական  
փարբիկան, բոլոր միջոցները պետք ե. ձեռք

առնեն նրանց կուլտուրական մակարդակը  
բարձրացնելու համար, պետք է պաշտպա-  
նեն նրանց անտեսական շահերը, բացատրեն  
նրանց աշխատանքի արտադրողականությու-  
նը ամեն կերպ բարձրացնելու և գործազրու-  
թյունը. քչացնելու անհրաժեշտությունը և  
այլն: Պրոֆմիութենական աշխատանքի բո-  
լոր ձևերն ու մեթոդները նոր, գյուղից յե-  
կած բանվորների միջև պետք է հարմարեց-  
վեն վերջիններիս կուլտուրական մակարդա-  
կին, վորովեսպի հետզետե դաստիարակե-  
լով նրանց բարձրացնենք և հասցնենք ար-  
դյունաբերական բանվորների հիմնական  
կազմերի մակարդակին:

Լայն աղիտացիոն և կուլտուրական աշ-  
խատանքի միջոցով միությունները պետք է  
ի չփք զարձնեն սոցիալիզմի գործին թշնամի  
տարրերի կողմից նոր բանվորների կազմերի  
միջոցով պրոլետարիատի շարքերը խորթ,  
վոչ պրոլետարական տրամադրություններ  
մտցնելու վարձերը»:

Սակայն պրոֆմիությունների խնդիրը վոչ  
միայն այն և, վորակեսպի հետամնաց բանվորնե-  
րին հասցնեն պրոլետարիատի առաջավոր հիմ-  
նական կազմերին և այլպիսով ապահովեն ժո-  
ղովրդական տնտեսության վերակառուցման  
ողարմաններում առանձնապես անհրաժեշտ բան-  
վոր դասակարդի միաձուլությունն ու միասնա-  
կանությունը: Դրա հետ միաժամանակ գյուղը

նոր, սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու անհրաժեշտությունը և կուլտակային տարրերի դիմադրությունը գրան, ողահանջում են, վոր ոլրովմիությունները մաքսիմալ չափով զարգացնեն իրենց ազդեցությունը դյուղում այս վերջինիս հետ կապված բանվորների միջոցով։

«Պրոֆկազմակերպությունների կարևորագույն ինդիքներից մեկն և հանդիսանում կուլտ-կրթական աշխատանքի ուժեղացումը բանվոր դաստիարդի այն խավերի չարքերում վլորոնք այս կամ այն կերպ կապված են դյուղի հետ՝ բատրակների, սեղոնային բանվորների և դյուղում դանվող ձեռնարկությունների բանվորների միջև։ Նրանց կուլտուրական մակարդակի բարձրացումը, դասակարգային դաստիարակությունն առանձնապես անհրաժեշտ են հիմու, սոցիալիստական ուժեղ շինարարության ժամանակաշրջանում թե՛ բանվոր դասակարդի չարքերը քաղաքականապես միաձուլելու և թե՛ պրոլետարական ազդեցությունը դյուղում ուժեղացնելու համար» (կուլտ-աշխատանքի առթիվ՝ ընդունված բանաձեկից)։

VIII Համազումարն ընդունեց, վոր՝

«Դասակարգային ողայքարի սրումը դյուղում, բանվոր դասակարդի և աշխատավոր դյուղացիության շաղկապն ամրացնելու խնդիրը, դյուղում կուլտակի դեմ մղվող պայքարը կազմակերպող պրոլետարական տարրերն ի մի համախմբելու անհրաժեշտու-

թյունն առանձնապես կարեւոր են զարձնում  
միությունների աշխատանքը գյուղում»:  
(ՀԱՄԿԽ-ի հաշվետվության առիվ ընդուն-  
ված բանաձեկից):

Այդ պատճառով մի կողմից՝

«Միութենական կազմակերպությունները  
գյուղում և նրանց շուրջը համախմբվող  
մասսաները պետք է գրավեն առաջալոր  
դիրքերը կուլակային տարրերի դեմ մղած  
պայքարում կարևորագույն ժաղաքական և  
տնտեսական խնդիրները լուծենու ժամանակ  
(խորհուրդների վերընտրություն, գյուղա-  
տընտեսության կոլլեկտիվացում, գյուղա-  
ցիական տնտեսության կոռուկերացում, սով-  
խողների կազմակերպում և այլն) և պետք է  
դառնան գյուղատնտեսության ավելի բարձր,  
տմենից ավելի կուլտուրական, կոլլեկտիվ  
ձևերի տարածման գործի պիտներներ, ամեն  
կերպ ուժեղացնելով ողբուհատարական ազդե-  
ցությունը գյուղի հասարակական և քաղաքա-  
քական կյանքի բոլոր կողմերի վրա, այդպի-  
սով աջակցելով գասակարգային քաղաքո-  
կանության անցկացմանը խորհրդային մար-  
ժինների աշխատանքում» (ՀԱՄԿԽ-ի հաշվե-  
տվության բանաձեկից):

Իսկ մյուս կողմից, համագումարը նշել է մի  
շարք կոնկրետ խնդիրներ՝ այն միությունների  
համար, վարոնք կամ անմիջապես միացնում են  
գյուղի պրոլետարիատը, կամ կապված են գյու-

դի՛ հետ իրենց անդամների այն խմբերի միջուցով, վորոնք միայն ժամանակավորապես, համեմատաբար կարծ ժամանակով միայն զնում են աշխատելու արդյունաբերական ձեռնարկություններում։ Ահա թե ինչու համագումարը մատնանշեց, վոր՝

«Սեղոնային բանվորների և գյուղից քաղաք և արդյունաբերական կենտրոններն աշխատանքի գնացող յեկվորների թվի աճումը պահանջում է, վոր միություններն ուժեղացնեն իրենց ուշադրությունը և այդ խմբերի (թե՛ միության անդամ հանդիսացող և թե՛ չկազմակերպված) սպասարկումը կազմակերպելը նրանց դասակարգային-պրոլետարական վորով բանվորների կատը պրոլետարիատի հիմնական կազմերի հետ ամբացնելու և նրանց պրոլետարական ազգեցությունը դեպի գյուղը փոխադրողների վերածելու իմաստով։

Սեղոնային բանվորներին միացնող ոլրոֆեսիոնալ միությունները (կառուցողներ, լեռնաբույսունաբերական, հողանոտառ, շաքարի արդյունաբերության բանվորներ և այլն) պետք է այնպես կառուցնեն սեղոնային ու յեկվոր բանվորներին սպասարկելու իրենց աշխատանքը, վորպեսզի չխղեն իրենց կազմը նրանց մշտական կազմերի հետ վերջիններս գյուղում ազրած ժամանակը։ Ան-

Հրաժեշտ և առանձին ու շաղրություն դարձնել  
նոր անդամներ գրավելու դործն ինչպես հարկն  
և զնելու վրա, ուժեղացնել յեկըլոր բանվորների  
միութենական սպասարկությունն՝ աշխատանք  
վնասուելու ժամանակ, այն կետերում, ուր նը-  
րանք ամենից ավելի յին կուտակվում՝ աշխա-  
տանքի բորսաներում, հանդույցային յերկաթու-  
ղային կայարաններում և այլն. անցկացնել սե-  
զոնային բանվորների լայն ներգրավում միութե-  
նական աշխատանքի բոլոր տեսակների մեջ,  
սեղծելով և դաստիարակելով ստորին միութե-  
նական ակտիվ անմիջապես միությունների ան-  
դամների այդ խմբից: Համագումարը հանձնա-  
րարում և ՀԱՄԿԽ-ին մշակել սեղոնային բան-  
վորներին սպասարկելու պրակտիկ ձևերը» (կաղ-  
մակերպչական աշխատանքի մասին ընդունված  
բանաձևելց) :

Բանվորների հիմնական կադրերը գյուղում  
իհարկե, գյուղանտառ աշխատավորներն են:  
Նրանց միության աշխատանքները նույնպես հրա-  
կայական նշանակություն ունեն գյուղի սոցիա-  
լիստական վերակառուցման համար: Ութերորդ  
համագումարը մատնանշեց, վոր

«Գյուղական աշխատանքի ասպարիզում յե-  
ղած բացառապես դժվար և կարևոր խնդիր-  
ները դրված են հիմնական գյուղական միու-  
թյան առաջ—Հողանոտառ Միության առաջ,  
վորի աշխատանքը կարող և հաջողությամբ

ընթանուի տմենից առաջ դյուզատնուսական պրոլետարիատն աշխատավարձի բարձրացման, բանվորական որվա կրծատման, Աշխատանքի որենսությունն անցկացնելու և կուրաքային անտեսություններում սոցապահովագրություն կատարելու համար մզվող ոլոյքաբարչ չուրջը համախմբելու հիման վրա (ՀԱՄԿԱ-ի հաշվետվության առթիվ ընդունված բանաձեից) :

Հողանտառմիության աշխատանքի դժվարությունը րզխում և նրա մեջ միացած բանվորական խմբերի ցրվածությունից, նրանց կախվածությունից վարձողից և թույլ նյութական ապահովությունից : Ինքնուրույն կերպով, առանց ինդուստրիալ միությունների ողնության իր առաջ զրված խնդիրները լուծել Հողանտառմիությունը չե կարող :

Ութերորդ համակարգային ռայդը սկսածառով միութենական կազմակերպությունների ուշադրությունն և հրամիքում այդ միության ամեն անակ նյութական և բարոյական աջակցություն ցույց տալու» : Խոկ ընդհանրապես, «բոլոր ինդուստրիալ միությունները պետք և ողնուն այն պրոֆեսալազմակերպություններին, վարմաք միության անդամների զգալի խմբեր ունեն գյուղում : Միությունների դյուզում տարվող աշխատանքների կարեռապույն խնդիրը պետք և գտննա իրենց անդամների կուլտուրական և քաղաքական

սպասարկումը։ Մոտակաւ ժամանակներում արգեն  
միությունները պետք է ձգտեն իրենց անդամներին  
դյուլում ազահովելու լրադրերով, ռազիոյով,  
հանրամատչելի զբքով» (ՀԱՄԿԽ-ի հաշվետվու-  
թյան պաթիվ ընդունված բանաձևից)։

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐՈՖՄԻՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոֆեսարիատի հիմնական քաղաքական և  
տնտեսական խնդիրների իրականացումը կտրված  
է լայն բանվորական մտասաների կուլտուրական  
և քաղաքական մտկարդակը բարձրացնելու ան-  
հրաժարական հետ։

Սոցիալիստական առարկերը մեր յերկրում ամ-  
րացնելու և զարգացնելու համար գործադրվող  
վոչ մի միջոց չի կարող լիովին այն հետևանքը  
տալ, ինչ վոր անհրաժեշտ է, առանց կուլտուրա-  
կան հեղափոխության։ Յերկրի ինդուստրացումն  
ու արտադրության ռազիոնալացումն իմաստ ու-  
նեն միայն այն ժամանակ, յերբ վերակառուցվող  
և ամրացող արդյունաբերության շարքերում ան-  
դրազետ բանվորներ չեն լինի, իսկ ԽՍՀՄ-ի ար-  
տադրական ուժերի զարգացման տեմոնն ուղղակի  
կախման մեջ և գտնվում բանվորական մասսայի  
կուլտուրական աճումից։ Միաժամանակ, ինչպես  
այդ մատնանշել է VIII համագումարը՝

«Կուլտուրական մտկարդակի բարձրացումն ու  
բանվորական մասսաների քաղաքական ակտիվու-

բան ուժեղացնեմք, համդիսամալով սոցիալիստական տնտեսության անման անհրաժեշտ պայման, անուր բազու յեն ստեղծում բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների դրության հետագա բարելավման համար» :

Այսդիսավ ինքն ըստ ինքրան ակնհայտ և կուլտուրական հեղափոխության ամբողջ հոկտեյական նշանակությունը : Միանդամայն ընտական և, վոր որովֆմիությունները, հոնդիսանուալով ողբովետարական մասսաները սոցիալիստական շինարարության մասնակից դարձնելու ակտիով կազմակերպիչները և աշխատելով բանվորների դրությունը բարելավելու վրա, խորը շահագրդուված են կուլտուրական հեղափոխությունն անցկացնելու մեջ : Պրոֆմիություններն անշնչ կերպով անց են կացնում ամենաբազմազան կուլտ-կրթական աշխատանք, վոր սպասարկում և արդեն բանվորական մասսայի պահանջները և այդ պատճառով ել դուրս և դալիս «կուլտուրական հեղափոխության կարեռավագույն շարժիչ ուժը» (միությունների կուլտ-աշխատանքի մասին ընդունված բանաձից) :

Պետք և ասել, վոր ուժեղորդ համագումարի նախորյակին միությունների աշխատանքը զգայի թափ և ստացել և հոկայական դեր և խաղացել մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու դործում : ՀԱՄԿԸ-ի ուժեղորդ համագումարին տված հաշվետվության մեջ բերված հան-

բաղսմարն անշուշտ այդ հաստատում է : Իսկուսես վեր առ մեկն Հունվարի 1926 թվի ակումբների թիվը հավասար էր 3418-ի , իսկ առ մեկն ապրիլի 1928 թվի 3776-ի : Նույն ժամանակ կարմիր անկյունների թիվը համար էր 21.700 և 33.471-ի : Առ մեկն ապրիլի 1926 թվի միություններն առնեցին 8.085 դրագարան և յերկու միլիոն 206 հազար բաժանորդ ու 15 միլիոն 621 հազար դիրք : Առ մեկն Հունիսի 1927 թվի դրագարանների թիվն էր արդեն 8.386 , բաժանորդներինը՝ յերկու միլիոն 981 հազար և զրքերինը՝ 18 միլիոն 714 հազար : Վերջին տարիներս կառուցվել են միքանի հարյուր նոր ակումբներ , վորի համար ծախովել են խոշոր միջոցներ : 1929 թ . ակտբային շինարարության համար յենթագրվում են ծախուել ավելի քան 50 միլիոն ռուբլի :

Կուլտ-հիմնարկների աշխատանքով ընդգրկված են հակայական մասսաներ : Ամբողջ ԽՍՀՄ-ում տարին մի անգամ կատարվող հաշվառման ժամանակ , հատկապես 1928 թվի մարտին ակումբներում և կարմիր անկյուններում դրվել են մոտ 270 հազար մասսայական բեմադրություններ , վորոնց ներկա յեն յեղել մինչև 33 միլիոն մարդ : Առ մեկն ապրիլի 1928 թվի մոտ 112 հազար խըմբակներում մտանակցում են ավելի քան յերկու միլիոն 150 հազար մարդ : Միությունները մեծ աշխատանք են կատարել պրոֆակտիվի պատրաստման և մասսայական պրոֆլուսավորության ա-

ոպարիզում : Առ մենքն ապրիլի 1928 թվի հաշվի յետնաված 13.600 պրոֆդրագիտության դպրոց և նորատակոյին ողբոֆիսմբակ, վորոնց մեջ սովորում եր ավելի քան 200 հազար մարդ : Բացի այդ, կող դպրոցների և գասընթացների մի ամբողջ ցանց, վորոնց մեջ ուստարասովում են վորակյալ ողբոֆիտթենական աշխատաօգներ :

Պրոֆմիությանները վորոշ հաջողություններ են ձեռք բերել թե՛ բարձրագույն դպրոցների սոցիալական կազմի ընտրության և թե՛ բանվոր գաստակարգից դուրս յեկած կարմիր մասնագետների նախարարաստման դործում : ՌիժՄՀՀ բարձրագույն դպրոցներն ընդունված րանգուրների ու նրանց յերեխանների թիվը կազմում եր 1923 թվին ընդհանուր թվի 25 տոկոսը, իսկ 1927 թ. 34.7 տոկոս և այլն : Զգալի չափով աճել և այդ ժամանակամիջոցում պրոֆմիութենական մամուլը : Պրոֆմիութենական լրագրերի և պարբերականների տիրաժը մեծացել և վերջին տարին աճել և 1 միլ. 646 հազ. 150-ից մինչև 2 միլիոն 94 հազ. 776 : Այս բոլոր թվերը բովականաչափ բնութաղբում են պրոֆմիութենական կուտաշխատանքի զարգացումը :

Սակայն վորքան ել վոր զգալի լինելին պրոֆմիութենական կուլտ-կրթական աշխատանքի նվաճումները, այն բնագավառը, վոր պահանջում և միությունների ներգործությունը, զուրս և յեկել այնուամենայնիվ ավելի, քան յեղած հնարավորությունները : Բավական և մատ-

նահնչել, վոր VIII համագումարի 1.042 պատգամայիսրներից 14-ը անդրադեալ է յին։ Մինչեւ իսկ համարմիութենական համագումարի ողատղամաժորների շարքերում անդրադեաներ են յեղել։ Աւրեմն դեռ շատ բան կա անելու հեր մնացորդ անդրադիառությունը վերացնելու համար։ Միամանակ կուլտաշխատանքը խոչը թերություններ ունի, իսկ յերբեմն ել խեղաթյուրումներ։ Այդ աշխատանքը հաճախ կորության վերաբերներից, այդ աշխատանքի մեջ նկատվել են սահմանափակ կուլտուրականայնության և ապոլիտիկության անառողջ զծեր։ Պրոֆեսիոնալ միությունները բավականաչափ ուշադրություն չեն նվիրել բանվորների հետամնաց խավերի կուլտուրական ողահանջները սպասարկելուն և նրանց դասակարգացնելուն պատրիարքականը և այլն և այլն։

Այս բոլորը—թե՛ միությունների կուլտուրական աշխատանքի հսկայական նշանակությունը կուլտուրական հեղափոխության ասուարիալում, վորն ավելի ևս կրկնապատկում և այդ կուլտաշխատանքի թերություններն ու խեղաթյուրումները և նրա անբավարարությունը մի շարք ճյուղավորումների մեջ—VIII համագումարի առաջ մի շարք կարևորագույն հարցեր եղել, վորոնց և նրա վորոշումները սպասող ողատասխան են տալիս։

Արինակ, համագումարը մատնանշեց,

**վոր** «կուլտուրական հեղափոխությունը յենքադրում և ամենից առաջ անզբագիտության վերացում» (կուլտաշխատանքի առթիվ ընդունված բանաձեկց) :

**Մատնանշելով, վոր**

«Այդ խնդրի լուծումը առաջին հերթին պահանջում է դպրոցական հասակի յերեխաների ընդհանուր պարտադիր ուսումնա ամենաարագ իրազործումը» (նույն բանաձեկց) :

Համազումարը մի շաբաթ վորոշումներ և ընդունում, վորոնք ճիշտ և հստակ կերպով սահմանում են միությունների խնդիրները անդրտդիտության դեմ պայքարելու գործում:

**«Մատնանշելով, վոր ժողովրդական լուսավորության պետական մարմինները բավականաչափ աշխատանք չեն կատարում մեծահասակ բանվորների և փոքրահասակների անդրադիտության վերացման գործում, ինչպես և այն, վոր պրոֆմիությունները այդ գործին բավականաչափ ուշադրություն չեն դարձնում, համազումարն առաջարկում է միութենական կազմակերպություններին հետամուտ լինել, վորպեսդի պլանաչափ կերպով ծավալվեն և բավականաչափ ֆինանսավորվեն գրադիտության դպրոցների և տարրական հանրակրթական դպրոցների ցանցը մեծահասակների և փոքրահասակների հա-**

մար ժողովրդական լուսավորության մարմինների կողմից :

Միաժամանակ պրոֆմիութենական կազմակերպությունները իրենց կողմից պետք և ուժեղացնեն զամարների հատկացումը կուլտֆոնդերի միջոցներից՝ իրենց անդամների անդրագիտությունը վերացնելու համար : Պրոֆմիությունները պետք և հաշվի տոնեն իրենց անդրագետ անդամներին, ամեն կերպ ներգրավեն ուսման ասպարեզ և հետեւն այդ ուսման հաջողությանը, հետամուտ լինեն, վորագեղի դպրոցական պարագմունքների տեղն ու ժամանակը համապատասխանեն յուրաքանչյուր դպրոցի ուսանողների կենցաղային ու արտադրական պայմաններին և վորագեղի դպրոցական պարագմունքները սովորողներին ամենից առաջ և դրխավորագես ընթերցանության, դրելու և հաշվելու ամուր ունակությունների վորոշ դումար տան :

Պրոֆմիությունները պետք և հատուկ ուշադրություն դարձնեն անդրագիտության վերացման վրա բանվորուհիների, բատրակության և միությունների անդամների կուլտուրագետ հետամնաց աղդային խմբերի միջև :

Անհրաժեշտ համարելով, վոր վճռական բեկումն առաջ բերվի պրոֆմիության անդամների անդրագիտությունը վերացնելու ասպարիզում, համագումարն առաջարկում և բոլոր պրոֆկաղմակերպություններին մուտիկ ժամանակներս

քննարկել անդրադիտության վերացման պրակտիկ միջոցառումների պլանը, այդ դործի շուրջը գորահավաքի յենթարկելով լայն բանվորական հասարակայությունը։ Յենելով նրանից, վոր պրոֆմիությունների անդամների անդրադիտությունը վերացնելու խնդիրը կարող է լուծվել տարբեր ժամկետներում բանվորների տարբեր խմբերի ու խավերի համար և վոր այդ խնդրի լուծման հաջողությունը ահադին չափով կախված է անդրադիտության վերացումը այդ խավերի կենցաղային, ազգային և արտադրական առանձնահատկություններին հարմարեցնելուց և այդ առանձնահատկությունները հաշվի առնելուց, համագումարն առաջարկում է բոլոր կենտրոնական կոմիտեներին մոտակա պլենումներում քննարկել և ընդունել իր միության անդամների անդրադիտության վերացման սլլանը։

Զարգացող կուլտուրական հեղափոխության պայմաններում, անդրադիտության դեմ պայքարելու գործին անուշադիր կերպով վերաբերվող միությունը չի կարող համարվել լավ աշխատող միություն, իսկ նրա կուլտ-կրթական աշխատանքը հանդիսանում է բացահայտորեն անբավարար (կուլտաշխատանքի առթիվ ընդունված բանաձեից)։

Սակայն միությունների կուլտ-կրթական աշխատանքի խնդիրները չեն սահմանափակվում անդրադիտության դեմ պայքար մղելով։ Թեև ՀԱՄԿԸ-ի հաշվետվության առթիվ ընդունված

բանաձեռւմ համագումարը յույց և տալիս, վոր  
«Հատուկ ուշադրություն պետք և դարձ-  
նել անդրագիտության և կիսագրագիտու-  
թյան վերացման վրա բանվոր դասակարգի  
շարքերում», «այնուամենայնիվ ինչպես հա-  
մագումարն արձանագրել և նույն բանա-  
ձեռւմ»:

«Սոցիալիստական շինարարության դըժ-  
վարությունները, քաղաքի և դյուղի կանոն-  
տակապահական տարրերի ընդդիմադրությու-  
նը սրովետարիատի սոցիալիստական հար-  
ձակմանը, սոցիալիզմի դործին թշնամի ու-  
ժերի կողմից բանվորների առանձին հետա-  
մնաց խավերի վրա ազդեցություն ցույց  
տալու փորձը այդ բանվորների շարքերում  
տուաջ են քերում մանր-բուրժուական տրա-  
մագրությունների ու տատանումների ար-  
տահայտությունն կոմկուսակցության և  
Խորհրդային խխանության հիմնական գծի  
վերաբերմամբ յերկրի ինդուստրացման ա-  
րագ տեմպը և դյուղի սոցիալիստական վե-  
րակառուցումն իրազործելու ասպարիզում,  
ինչպես և իրենց արտահայտությունն են  
գտնում կրօնական տարրերի ազդեցու-  
թյունն ուժեղանալու, անտիսեմիտիզմի ար-  
տահայտման և այլնի մեջ»:

Այս բոլորն առաջնակարգ խնդիր և դարձնում  
միությունների կուլտհիմնարկությունների հա-  
մար քաղլուսավորչական գործունեյության ծա-

վալումը և բանվորների լայն մասսաներին ժամանակին բանվոր դասակարգի, նրա կուռակցություն և խորհրդացյան իշխանության առաջ դրվագած ընդհանուր-քաղաքական և տնտեսական խնդիրները բանվորների և բանվորուհիների լայն մասսաներին բացատրելը։ Այդ աշխատանքը ողեաք և տարսի վոչ թե միանվագ կամսպանիոնների ձեռով, այլ պետք և դառնաս ամբողջ միութենական կուլտաշխատանքի որդանական մասը։ Արա հետ միաժամանակ միութենական կողմաներությունները վոչ մի զեղքում չպետք և թուլացնեն իրենց աշխատանքը բանվորական մակարդակը բարձրացնելու, վերջիններիս խելացի հանդիսու ու զվարճալիք տրամադրելու առարիդում, իրրե հարթեցողության և բանվորական կյանքում յեղած ուրիշ բացասական յերեսութենքների դեմ պայքարելու անհրաժեշտ պայմաններ։

Միաժամանակ համապումարն ընդդեմ, վոր միությունների վրա պատասխանատվություն և ընկենում բանվոր դասակարգի վրա դործադրվող բուրժուական և մեջանական ազդեցությունների դեմ պայքարելու գործում։ Կուլտաշխատանքի առթիվ ընդունված բանաձեռում մենք կարդում ենք՝

«Պոլետարիատի սոցիալիստական հարձակումը առաջ և բերում յերկրի կապիտալիստական տարրերի կողմից ընդդիմադրու-

թյան և հակահարձակման վիորձեր, վորոնք սոցիալիստական շինարարության դժվարությունների պայմաններում վորոշ տատանումներ և մանր-բռւրծուական տրամադրություններ են առաջացնում բանվոր դասակարգի ամենից ավելի հետամնաց խավերի շարթերում։

Այս կապակցությամբ պրոֆմիությունները պետք են ավելի մեծ ուշադրություն դարձնեն բանվորների նոր կաղըերի դասակարգային դաստիարակության վրա, բանվորներ, վորոնք ծանոթ չեն մինչհեղափոխական ֆաբրիկայի կյանքին և կենցաղին, չեն փորձել քաղաքացիական պատերազմի և տնտեսության վերականգնման դժվարությունները, մանավանդ այն բանվորների, վորոնք գյուղից են յեկել, զգալի չափով թափանցված են գյուղացիական շահերով և հակումն ունեն հիմնական պրոլետարական մասսայից, նրա շահերից և հասարակայնությունից մի կողմ քաշվելու»...

«Պրոֆեսիոնալ միությունների ամբողջ կուլտ-կյուրական աշխատանիքների մեջ պետք է ուժացնել դասակարգային, քաղաքական դասուարակությունը, բանվոր դասակարգի հիմնական խնդիրների և հրատապ հարցերի բացատրությունը, խորհրդային իշխանության, պրոֆմիությունների և կոմունիստական կուսակցության դործնական աշխատանքի լուսարանությունը»

նը սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրները լուծելու ասպարիզում, ինչպես և գաղափարական պայքարը պրոլետարիատի հետամբնաց խավերի մեջ գոյություն ունեցող մանրբուրժուական նախապաշարումների և ազդեցությունների դեմ, վորը պետք է տարվի թե՛ բանվորների այդ խավերի կուլտուրական մակարդակը բարձրացնելու միջոցով և թե՛ այդ ազդեցությունների ու նախապաշարումների դաստիարակային եյտթյան ու շաղիք ամենորյա ընկերական բացատրության միջոցով։ Պրոֆմիությունները պետք է նմանապես ուժեղացնեն պայքարը դասակարգայնորեն խորթ ազդեցությունների զեմ իդեոլոգիական և կուլտուրական ճակատում։

VIII Համագումարը մատնանշեց, վոր կուլտուրատանքի զարդացման խոչընդուաներից մեկն և հանդիսանում ակումբային շենքերի պակասը։ Ուստի համագումարը վորոշեց հետամուտ լինել, վոր ակումբային շինարարությունը մտցվի ժողովրդական տնտեսության հնդամյա պլանի մեջ։ Միաժամանակ համագումարը պրոֆկազմակերպությունների ուշադրությունն ե դարձնում միջնաբարձր ամենախիստ խնայողության վրա ակումբների կառուցման և այդ շինարարության բացիոնալացման վրա։ Միությունները պետք է ամեն կերպ ընդլայնեն ակումբից դուրս տարվող աշխատանքը՝ ճաշի համար տրվող դադարի ժամանակ, բանվորական կազմարմաներում, հանրա-

կացարաններում և այլն։ Պրոֆմիութենական  
կուլտաշխատանքների կենտրոն առաջվա նման  
ընդունվում է ֆարբիկա-գործարանային (արտա-  
դրական, միութենական) բանվորական ակումբը,  
ուստի միությունները պետք ե վճռական կերպով  
ողայքարեն ակումբների աշխատանքում յեզած  
դաշտանիարագրելության և խալուրայի դեմ, այդ  
աշխատանքի բովանդակությանը անսկզբունք վե-  
րաբերմունք ցույց տալու և նրա դաշտանիարական  
գասանկարդային կայունության վերաբերմամբ  
արհամարհանք արտահայտելու դեմ։ Ակումբը  
պետք է լինի վոչ միայն հանդսուի և զվարձալի-  
քի վայր, այլ և մասսաների քաղաքական դաս-  
տիարակության վայր։ Ակումբները պետք ե ար-  
ձագանքին քաղաքական և հասարակական կյան-  
քի հրատառ հարցերին։

Պրոֆկազմակերպությունների խոչորակույն  
խողիքներից մեկն և հանդիսանում ուժեղացնել  
կուլտ-կրթական աշխատանքը բանվոր դասակամր-  
դի այն մասի շարքերում, վորն այս կամ այն  
կերպ կապված է զյուղի հետ՝ բատրակների,  
սեղոնային բանվորների և այլն։ Սեղոնային բան-  
վորների շարքերում տարվող կուլտուրական աշ-  
խատանքը պետք է տարվի նույն սեղոնը վերջա-  
նալուց հետո, բանվորների գյուղերում դանվե-  
լու ժամանակ։ Միությունների ամբողջ կուլտ-  
կրթական աշխատանքի մեջ պետք է ամելի մեծ  
աշադրություն դարձվի բանվոր դասակարգի

գյուղում տարվելիք աշխատանքների սիստեմա-  
տիկ լուսաբանությանը :

Համագումարն իր խոսքն ասաց նաև կուլտ-  
աշխատանքի վորակի մասին :

Կուլտաշխատանքը պետք է ավելի հարմա-  
րեցված լինի բանվորների ու ծառայողների տ-  
ուանձին խմբերի կուլտուրական մակարդակին ու  
կուլտուրական պահանջներին և չպետք է կո-  
ռուցվի միենույն չարբնով : Պետք է բարելավել  
կուլտաշխատողների կազմը և կուլտաշխատանքի  
տուածքաշել բավականաչափ պատրաստված, քա-  
ղաքականապես կայուն մարդկանց, առավելա-  
պես բանվորների և բանվորուհիների, վորոնք  
բավականաչափ բարձր կուլտուրական մակար-  
դակ և մասսայական աշխատանքի փորձ ունեն :

Յերկրի ինդուստրացումը պահանջում է  
կուլտաշխատողների և մասնագետների նոր կաղ-  
րեր : Աւտոի նաև բանվորական ուժ պատրաստե-  
լու խնդիրները, գողրոցական խնդիրները համա-  
պատասխան անդ են գրաւել VIII համագումարի  
վորոշումների մեջ միությունների կուլտաշխա-  
տանքի մասին : Պրոֆմիութենական ակադեմիա նա-  
խապատրաստումը հանդիսանում է ամբողջ  
պրոֆմիութենական աշխատանքի վճռական պայ-  
ման : Այսականից ել հետեւմ և, թե վոր-  
քան կարեւը և ճիշտ դնել պրոֆմիութենական  
լուսավորությունը : Կուլտաշխատանքի այլ ճյու-  
ղի հետազտ ուժեղացման վրա հենց համագու-  
մարը նույնապես դարձնում է միությունների ու-

շաղրությունը։ Այժմյան պայմաններում պրոֆմիութենական մամուլի գերը դառնում է բացառապես լուրջ։ Համադումարը մատնանշեց, վոր պրոֆմիությունները պետք ե ավելի ուշադիր կերպով զեկավարեն իրենց մամուլը և պրոֆմիութենական մամուլն ել պետք ե դառնա պրոֆմիութենական դեմոկրատիայի ու առողջ պրոլետարական ինքնաքննադատության ծավալման հիմնական լծակը։

## ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԳՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԽՍՀՄ-ի պրոֆշարժումը հանդիսանում է համաշխարհային պրոֆշարժման ջոկատներից մեկը։ Այդ շարժումը հաղարավոր թելերով կազմված և թե՛ Պրոֆինտերնի միջոցով և թե՛ անմիջապես սահմանի այն կողմը գտնվող յեղբայրական կազմակերպությունների հետ։ VIII համադումարում կային դեռ կապիտալիստական պայմաններում աշխատող և կապիտալիստի դեմ պայքարող հեղափոխական միություններից և միջմիութենական կազմակերպություններից բազմոթիվ պատգամավորներ։ Արդեն այս մի հանդամանքը բավական եր, վորպեսզի VIII համադումարի աշխատանքներում արտացոլելին միջադդային ինդիրները։

Բայց մի հանդամանք ևս կա, վորը կրկնապատկում և ՀԱՄԿԾ-ի միջադդային աշխատանքի նշանակությունը։ Պրոլետարական հեղափոխու-

թյան գործը միայն ԽՍՀՄ-ի բանվորների գործը  
չէ : Սոցիալիստական շինարարությունը, վորին  
իրենց ոլրովֆմիությունների միջոցով մասնակցում  
են միլիոնավոր խորհրդային բանվորներն ու ծա-  
ռայողներ, հանդիսանում են նաև ամբողջ համաշ-  
խարհային պրոլետարիատի գործը : Նրա հաջո-  
ղությունները և նույնիսկ նրա անարդել շարու-  
նակության ու ավարտման հնարավորությունը  
դգնայի չափով կախված են նրանից, թե վորքան  
յեռանդավ կազախականնեն պրոլետարական հեղա-  
փոխության միջնարմբը բոլոր յերկրների բան-  
վորները : ԽՍՀՄ-ի պրոֆշարժման կազմը արտա-  
սահմանյան պրոֆշարժման հետ ամրացնում և սո-  
ցիալիստական շինարարության գործը : Ահա թե  
ինչու VIII համազումարը անհրաժեշտորեն պիտի  
հաշվի առներ միջազգային գրությունը, կըուեր և  
զնահատական տար միջազգային պրոֆշարժման  
ուժերին և սուսակներ մեր կապերի ամրությունը  
արտասահմանյան յեղայրական կազմակերպու-  
թյունների հետ :

Միջազգային գրությունը VIII համազումարի  
ժամանակ հետեւյալ հիմնական գծերով եր բնու-  
թաղրիում : Զղալի չափով առաջ եր անցել մի  
շարք յերկրներում ի հաշիվ բանվոր դասակարգի  
կատարված կապիտալիստական ռացիոնալացու-  
մը : Ուժեղացել եր քաղաքական և տնտեսական  
ուժակցիան : Անզլիայում, Խոալիայում, Գերմա-  
նիայում և այլ յերկրներում անց են կացվել հա-

կապրոֆմիութ .որենքներ և մտցված և պարտադիր  
արբիտրաժ : Այս բոլորը հանդիսանում ե կապի-  
տալիզմի հարձակում բանվոր դասակարգի դեմ :  
Այս պայմաններում առանձնապես սուր կերպով  
և արտահայտվում ոեփորմիստական պրոֆմիու-  
թյունների և նրանց առաջնորդների շորեյլրրե-  
խներյան գերը : Պրոֆմիութենական բյուրոկրա-  
տիան բոլոր յերկրներում վերածվել ե կապիտա-  
լիստական շահաղործման գործիքի , բուրժուայտ-  
կան պետական ապարատի մի հավելվածի : Բայց  
միենույն ժամանակ մենք տեսնում ենք բանվոր-  
ների նորանորը ջոկատների դասակարգային գի-  
տակցության մակարդակի բարձրացում , բանվոր  
դաստակարգի մարտական տրամադրությունների  
աճում և պլոֆշարժման ամրացում մի շարք դա-  
ղութային և կիսադաղութային յերկրներում (Խա-  
ղաղ.ովկիանոսում , Լատինական Ամերիկայում և  
այլն) , ինչպես և դասակարգային պայքարի սր-  
բում : Այն բոլեյին , յերբ ոեփորմիզմի պարա-  
գլուխները խոսում են «արդյունաբերական խա-  
ղաղության» մասին , իրոք բոլոր յերկրներում  
(Գերմանիա , Լեհաստան , Ավստրիա և այլն) կտ-  
արվում ե դասակարգային պայքարի սրբում (լո-  
կառաներ , գործադրույներ , ապօտամբություն-  
ներ և այլն) : Վերջին ժամանակներս տեղի ունե-  
ցող հոկայական սոցիալական կոնֆլիկտաների՝ թե՛  
թուրի բոկառուների , թե Լոձի տեքստիլ բանվոր-  
ների գործադրույների և թե՛ ուրիշ շատ խոշոր

դործագուշների ընորոշ գիծն այն է, վոր շարժմանը մասնակից են դառնում նոր, չփորձված և չկտղմակերպված բանվորների, կանանց և յերիտասարդների հոկայտական մտսաներ։ Աճել է միջդաստկարգային վոխ-հարաբերությունների լորիտաթյունը։ Մենք ներկա յենք նոր վերելքի սկզբում համաշխարհային բանվորական շարժման մեջ։ Այս վերելքը, վոր տեղի յե ունենում միաժամանակ ԽՍՀՄ-ի արագ անաստական աճման հետ, հաղջեռե ավելի յե խափառում կտակիտալիստական ստարիլիզացիան։

Այն վորոշումներն ու այն գիծը, վոր ընդունել են Պրոֆինանսի IV կոնդրեսը և կոմինտերնի VI կոնդրեսը, ամբողջությամբ և լիովին արդարացի յեն, ինչպես ցույց է տալիս իրերի ամրող ընթացքը։

Աւտոի համադումարը ընդդեմ ե՝

«Եր կատարյալ համերաշխությունը IV կոնդրեսի վորոշումների հետ, մասնավորապես Ամսակերպամի դեմ մղվող պայքարը սրբալու և տնտեսական մարտերը ինքնուրույն կերպով դեկավարելու գծին անկախ և ընդդեմ ուժորմիուտական ալրոֆրյուրոկրատների կամքի, վորոնք այժմ դարձել են բուրժուական ողեառության և ձեռնարկատերերի կադակերպությունների բաղադրիչ մասերից մեկը» (ընկ. Լազովսկու զեկուցման առթիվ ընդունված բանաձեից)։

Միաժամանակ համապումարը վորոշում ընդունեց

«Լիովիլ և ամբողջությամբ հավանունություն տալ Պրոֆինտերնի ժաղամական զծին և կազմակերպչական աշխատանքին և ոեփորմիստական միությունների անդամների հիմնական մասան նվաճնելու և այդ միություններին ոեփորմիստական միությունների ներսում պրաֆինտերնական ոպողագիտական ձեռնկերպելու և կազմակերպչութեան ամրացնելու միջոցով տիրապետելու և քե' ինքնուրաւյն հեղափոխական միությունների աշխատանքը ծավալելու ուղղությանը» (ընկ. Լազովսկու զեկուցման առթիվ ընդունած բանաձելից) :

Պրոֆեսիոնալ շարժման հեղափոխական թերի ուժնակարեսոր խնդիրը պետք և համարի բանվոր գասակարգի անտեսական մարտերը ինքնուրույն կերպով զեկավարելը՝ դեմոկրատական, ընտրովի գործադրության կոմիտեների, հակալուկառատային կոմիտեների ստեղծում և այլն : Կազմակառավագան յերկրներում կատարված ուսցիոնալացման և արտադրության մեջ վորակյալ աշխատանքի հարաբերական թվի պակասելու կատակցությամբ արդյունաբերության մեջ մեծ զեր են սկսում խաղալ կիսավարժ և անվարժ բանվորները, կանայք և յերիտասարդությունը : Բայց այդ բանվորները վատ են

կաղմակերպված, այն ինչ նրանք յերբեմն հրակայակոն դեր են խաղում ձեռնարկատերերի գեմ մզած կովում: Աւստի չկաղմակերպվածների կաղմակերպումը ներկայումս արտակարդ նշանակություն և ստանում:

Վերջին ժամանակներս հեղափոխական ոլորֆշարժման շարքերում, մանավանդ Գերմանիայում, աջ տարրերը պայքար են մզում Պրոֆինաերնի IV կոնգրեսի քաղաքականության դեմ: Փոխանակ տնտեսական կոնֆլիկտները ինքնուրույն կերպով զեկավարելու, փոխանակ միասնական ճակատի ներքեցից, առաջարկվում և բեփորմիատական պարագլուխներին «դեպի ճախ հրելու» տակտիկան, գործադուլային կոմիտեներ ստեղծելուց հրաժարվելու տակտիկա, պրոֆբյուրոկրատների հետ միասնական ճակատ ստեղծելու տակտիկա: Սա աջ վուանգ և, վորի դեմ պետք ե վնասական և անհաջու պայքար մղել: Այդպիսի հայցքները խորթ և թշնամական են միջազգային բանվոր դասակարգի շահերին և խորհրդային պրոֆշարժման ամբողջ դիրքավորման:

Համագումարն այս պաճառով ընդդեմ, վորորոֆշարժման միասնականության համար տարվող պայքարը պետք է մղվի դասակարգային հետեւղական լենինյան գծով: Այդ պայքարը հեղափոխական պրոֆշարժման համար այնքան ավելի հաջող կրնթանա, վորքան ավելի վճռական կերպով պայքարի միջազգային բեփորմիզմի և աջ թեքման դեմ իր շարքերում և վորքան ավելի հա-

մառ կերպով նա աշխատի իր սեփական շարքերը  
չխուզված լենինյան լողունդների շուրջը և յերկու  
ճակատով անհաջող պայքար մզելու հիման վրա  
համախմբել : Աւստի և վոչ մի զիջում Պրոֆին-  
տերնի շարքերում յերկացող բացահայտ և ծա-  
ծուկ թեփորմիստական տենդենցների նկատմամբ :  
**ԽՍՀՄ-ի** պրոֆմիությունները պետք և ամեն  
կերպ աջակցեն Պրոֆինտերնի գործունեյությա-  
նը, վորովհետեւ նա հանդիսանում է տնտեսապես  
կազմակերպված բանվորների միակ մարտական  
միջազգային կազմակերպությունը, բանվորնե-  
րի, վորոնք ամբողջ աշխարհում պայքարում են  
ժիմնույն նպատակների համար ինչ վոր միջազ-  
գային կոմունիզմը :

**ԽՍՀՄ-ի** պրոֆմիությունները կատարել են  
իրենց միջազգային ընկերական պարտքը  
աշխատանքի և կապիտալի տնտեսական կոնֆ-  
լիկաների ժամանակ զանազան յերկրներում : Հա-  
մագումարը վորոշեց, վոր հետազում  
ևս այդ պրոֆմիությունները պետք և  
զդայուն կերպով արձագանքեն համաշխարհային  
բանվորական շարժման մեջ տեղի ունեցող բո-  
լոր կոնֆլիկտներին, դորահավաքի յենթարկելով  
**ԽՍՀՄ-ի** պրոլետարիատը միջազգային դասա-  
կարգային պրոլետ համերաշխություն հայտա-  
բերելու համար :

Ներկայումս միությունների կարեռագույն  
խնդիր և հանդիսանում այս բոլոր դեպքերի հան-  
գեղ ԽՍՀՄ-ի բանվորական մասսաների ինտեր-

նացիոնալ դաստիարակությունը : Այս նողատակով  
անհրաժեշտ է ուժեղացնել Պրոֆինտերնի վորո-  
շումների պապուլյարիզացիան և ԽՍՀՄ-ի բան-  
վորական մասսաներին սիստեմատիկ կերպով բա-  
ցարել պրոլետարիատի դրությունը կազմակե-  
տական յերկրներում և տեղեկացնել միջազգային  
բանվորական շարժման մեջ տեղի ունեցող բոլոր  
դեսպանին : Միությունների միջազգային աշխա-  
տանքը պետք է զառնա մասսայական : Այդ աշ-  
խատանքին պետք է մասնակից լինեն բանվորների  
լայն խավերը :

### ՀԱՅԿՈՄԿՈՒՄԻ (բ) ՂԵԿԱՎԱՐՈՒ- ԹՅԱՄԲ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱ- ՌՈՒՑՄԱՆ ՈՒՂԻՌՎ

ԽՍՀՄ-ի պրոֆեսիոնալ շարժումը դպավի հա-  
ջողություններ և ունեցել գլխավորապես այն  
պատճառով, վոր աճել և զարգացել և լենինյան  
կոմկուսակցության փորձված զեկավարության  
տակ, մի կուսակցություն, վորը յերկար պատ-  
ճական մարտերում ընդում ինքնակալության,  
բուրժուազիայի և մենչեւիկների ու եսերների մա-  
ները-բուրժուական քաղաքական կուսակցություն-  
ների, նվաճել և բանվորական մասսաների ավան-  
դարդի և առաջնորդի պատվավոր դերը և վորը  
պրոֆշարժումը ցեխային նախապաշարումների ու  
նեղ-տնտեսական պայքարի ուղինց փոխադրել և  
լայն ծավալուն քաղաքական պայքարի ուղին ընդ-  
ում կապիտալիստական ստրկության և շահա-  
գործման ամբողջ հասարակարդի : Սոցիալիստա-

կան վերակառուցման ժամանակաշրջանի առաջա-  
դրած ամենաբարդ խնդիրները՝ պրոֆմիություն-  
ները կարող են լուծել լիովին, յերբ նրանք առա-  
ջիկայում են ամուր և անչնդ կերպով կընթանան  
նույն ուղիով :

VIII Համագումարը մի ցույց եր Համ. Կոմ.  
(բ) կուսակցության և պրոֆմիությունների քո-  
ղաքականության միասնականության :

Համագումարի Փրակցիան Համ. Կոմ. (բ) կու-  
սակցության կենտրոնի նոյեմբերյան պլենումի  
արդյունքների մասին միաձայն ընդունված բանա-  
ձեռմ հայտարարեց, վոր ինքը «ամբողջությամբ  
և լիովին հավանություն ե տայիտ պլենումի վո-  
րոշումներին» (VIII Համագումարի Փրակցիայի  
ընդունած վորոշումից) :

Յեկ բնկ. Դոգագովը իրավացի յեր, յերբ հա-  
մագումարը փակելիս ասաց՝

«Համագումարը ցույց տվեց, վոր չնայած  
դործնական տարածայնություններին մեր պրոֆ-  
միություններ միասնական ե, վոչ մի ոկզրունքային  
տարածայնություն, վոչ մի ուրիշ գիծ քացի այն,  
վոր պրոֆշարժման մեջ անց ե կացնում Համ.  
Կոմ. (բ) կուսակցությունը, մեր Համագումարում  
չի յեղել, ինչպես և չի յեղել նաև նախորդ Համա-  
գումարներում։ Այդ վկայում ե մեր պրոֆշարժ-  
ման ուժը, այդ վկայում ե, վոր պրոֆշարժման  
զեկավար մարմին ՀԱՄԿԽ-ի վարած քաղաքական-  
նությունը ճիշտ ե, վոր նա ապահովում ե ԽՍՀՄ-ի  
պրոֆշարժման հղորությունը։

Պրոֆշարժման այդ հղորությունը միաժամա-

նուկ մեղ շատ և պարտավորեցնում : ԱՍՀՄ-ի  
պրոֆմիությունները յերբեք չեն հակագրել միու-  
թենական խնդիրներն ու շահերը կոմկուսակցու-  
թյան և խորհրդային իշխանության խնդիրներին :  
Ռւսակի ամրող բանվոր զասակարդի ,Խորհրդային  
իշխանության և կոմկուսակցության առաջ դրվող  
խնդիրները հանդիսանում են նաև մեր խնդիր-  
ները :

Այս խնդրները հոկայտական են և նրանց լու-  
ծումը պահանջում է բանվոր զասակարդի բոլոր  
ուժերի զորահավաք , մեր Միության ամրող աշ-  
խատավորների զորահավաք :

Ընկերներ , յես համոզված եմ , վոր մենք հա-  
մարձակ և անշեղ կերպով կգնանք լենինյան կու-  
սակցության և լենինյան կենտկոմի նշած ու-  
ղիով» :

Վոր ընկ . Դադաղովի խոսքերն արտահայ-  
տում եյին ամրող համազումարի կարծիքը , այդ  
ցույց և տալիս համազումարի կոմունիստական  
Փրակցիայի վորոշումը , վորը զանում և , վոր՝

«ԱՍՀՄ-ի պրոֆեսիոնալ շարժումը յերբեք  
կանգնած չի յեղել ցեխային , այսպես կոչ-  
ված «զուտ բանվորական» տեսակետի վրա :  
Այդ շարժումը անշեղ կերպով պաշտպանել ե  
պրոլետարական դիկտատորայի արմատա-  
կան շահերը բանվոր զասակարդի դաշինքը  
գյուղացիության լայն մասսաների հետ ամ-  
րացնելու հիման վրա : Այժմյան պայմաննե-  
րում պրոֆմիությունները իրեւ բանվոր դա-

սակարգի հիմնական և ամենալայն կազմակերպությունը, պետք ե ուժեղ յեռանդով ծավալեն մասսաները զորահավաքի յենթարկելու աշխատանքը սոցիալիզմի շնարարության և այդ գործի հետ կապված դժվարությունները հաղթահարելու համար։ Հիշելով, վոր այդ տեսակետից դեռ չեն ողտագործված պրոֆմիությունների ձեռքում յեղած հսկայական հնարավորությունները, Փրակցիան հայտարարում ե, վոր վերակառուցման շրջանի դժվարությունների հաղթահարումը պահանջում ե պրոֆմիությունների ավելի մեծ մասնակցությունը սոցիալիստական շենարարության բոլոր ճյուղերում և ավելի քան յերեսիցե այդ յեղել ե, բանվորական մասսաների և դյուզի աշխատավորների զորահավաքը սոցիալիզմի հերթական խնդիրների ակտիվ լուծման համար»։

Միությունների և Համ. կոմ. (թ) կուսակցության նույն սերտ միությունը արտացոլում է նաև համագումարի հետեյալ վորոշումը։

«Պրոֆմիությունները վնասական կերպով կաջակցեն Համ. կոմ. (թ) կուսակցության լենինյան նիշտ գծից յեղած բոլոր շեղումների, այդ գիծը անցկացնելիս յեղած բոլոր տատանումների դեմ մղած պայքարում։ մանավանդ համագումարը ընդգծում ե, վոր առանձնապես անհրաժեշտ ե տվյալ մոմենտում պայքարել ինդուստրիացման արագ-

տեմպի և կուլակի դեմ ուժեղ հարձակում  
կատարելու ու գյուղի սոցիալիստական վե-  
րակառուցման առթիվ յեղած տատանումների  
դեմ» (ՀԱՄԿԽ-ի հաշվետվության առթիվ  
ընդունած բանաձեկց) :

Համագումարը մատնանշեց, վոր ինչպես և  
առաջ ԽՍՀՄ-ի պրոֆմիությունների ամբողջ աշ-  
խատանքը պետք է ընթանա Լենինի ցույց տված  
ուղիով՝ «քաղաքականության և տնտեսության  
անքակտելիության, լայն բանվորական մասսա-  
ների և նրանց պրոֆմիությունների ու Խորհրդա-  
ցին իշխանության շահերի անքակտելիության ու-  
ղիով» : Միաժամանակ համագումարը կատեգորիկ  
կերպով հայտարարում է, վոր

«Պրոֆմիությունները խորհրդային պե-  
տությանը և պրոլետարիատի դեկալարող  
կուսակցության Համկոմկուսին (թ) հակադ-  
րելու բոլոր փորձերին ԽՍՀՄ-ի պրոֆշար-  
ժումը առաջիկայում ևս վճռական հակահար-  
ված կտա...» (ՀԱՄԿԽ-ի հաշվետվության  
առթիվ ընդունված բանաձեկց) :

Ահա թե ինչու պրոֆեսիոնալ միությունները  
ուժեղացնելով և ամրացնելով իրենց աշխատանքը  
բանվորական մասսաների տնտեսական, իրավա-  
կան և կենցաղային շահերի պաշտպանության,  
նրանց կազմակերպելու և կուլտուրակես սոլա-  
սարկելու գծով, պետք է այդ աշխատանքը միշտ  
կազեն ընդհանուր դասակարգային խնդիրների  
հետ, ամբողջ բանվոր դասակարգը զորահավաքի

յենթարկելով սոցիալիստական վերակառուցման  
հիմնական պրոբլեմների շուրջը և այդ ճանապար-  
հին կանգնած բոլոր գժվաբությունները հաղթա-  
հարելու համար։ Այս ուղղությամբ պրոֆմիու-  
թյունների կարեռագույն քաղաքական խնդիրն է  
հանդիսանում վճռական և անհաջող պայքար  
պրոֆմիության մեջ լենինյան դժի համար, ամեն  
տեսակ մանր-բուրժուական տասանումները, տր-  
բամադրությունները և կուսակցության հետեւ-  
զական գառակարգային դժի խեղաթյուրումը  
հաղթահարելու համար, ԽՍՀՄ-ի պրոֆշարժման  
համար կուսակցության հետեւզական և ստուգ-  
ված լենինյան դեկավարությունն ապահովելու  
համար։

### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ահա համառոտ կերպով այն, ինչ վոր տաել ե-  
պրոֆմիությունների VIII համագումարը։ Կատա-  
րել համագումարի վորոշումները գործնականում  
առորյա և պրակտիկ աշխատանքում պրոֆմիու-  
թյունները կը կարողանան միայն այն ժամանակ,  
յեթե նրանք լարեն իրենց ապարատի և ամբողջ  
պրոֆմիութենական ակտիվի ամբողջ ուժն ու յե-  
սանդը, յեթե VIII համագումարի վորոշումներն  
անցկացնելու համար մասնակից կղարձվեն բան-  
վորների և ծառայողների, բատրակների ու բան-  
վորուհիների մասսաները։ Ահա թե ինչու անհրա-  
ժեշտ և լայն կերպով ժողովրդականացնել պրոֆ-  
միությունների VIII համագումարի վորոշումները

ամբողջ միութենական մռասայի մեջ։ Ամեն մի  
բանվոր ու բանվորուհի, ամեն մի ծառայող պետք  
է խմանա, թե ի՞նչ և առել և ի՞նչ և վորոշել պրո-  
ֆեսիոնալ միությունների Համամիութենական  
Համագումարը, վորավհետեւ այդ հիմնական պայ-  
մանն եւ, վորագեղի VIII Համագումարի վորո-  
շումները ամենից արագ և լիակատար կերպով  
կյանքի մեջ անցկացվեն բոլոր պրոֆեկազմուկեր-  
պությունների կողմից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական և տնտեսական կացությունը Միությունների VIII համագումարի ժամանակ	3
Միությունների VIII համագումարի նշանակությունն ու աշխատանքը	13
Բանվոր զասակարգի հիմնական դիմքը վերակառուցման շրջանում և պրոֆմիությունների անելիքները	17
Պրոֆմիությունները VIII համագումարի ժամանակ	31
Միությունների ամբացումը, իրրե փոխանցող մեխանիզմի կուսակցությունից դեպի մասսաները	37
Բանվորների նյութական շահերի պաշտպանությունը և ուշադրություն դեպի նրանց կենցաղային կարիքները	41
Մասսաները սոցիալիստական շինարարության մեջ ներդրավելը	68
Պրոֆմիությունները՝ պետակարատը բարելավելու և բյուրոկրատիզմի դեմ պայքարելու գործում	76
Ինքնաքննադատությունն ու գեմուկրատիան պրոֆմիություններում	84
Միությունների աշխատանքը հետամնաց կաղը էնտ դյուզում	100

Կուլտուրական հեղափոխությունն ու պրոֆ- միությունները	110
Պրոֆմիությունների միջազգային աշխա- տանքը	124
Համ. կոմ. կոստի(ր) դեկանարությունը սոցիալիստական վերակառուցման ուղիով	131
Եեզրակացնություն	136



(404)

A 8097

ԳԻՆԸ  
35 Կ.